ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 4 *Общественные науки*

Ակս. Հակոբյան

ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

(1921 թվի փետրվարի 13-ից ապրիլի 15-ը)

Երբ Հայաստանում Սովետական իշխանությունը դեռ նոր էր սկսել իր առաջին քայլերը, դաշնակները, իրենց շուրջը հավախմբելով կոնտրռևոլուցիոն տարրերը, բարձրացրին 1921 թվի փետրվարյան ավանտյուրան։

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ սկսված այդ կոնտրռևոլուցիոն ելույթն ուներ իր որոշակի նպատակը՝ տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում և ռեստավրացիայի ենթարկել հին կարգերը, երկիրը կրկին դարձնել իմպերիալիստական պետությունների գաղութ, կոնտրռևոլուցիոն պայքարի բազա Սովետական Ռուսաստանի դեմ։

Սոցիալիստական ռևոլուցիայի մեծագույն հանճար Վ. Ի. Լենինը՝ խոսելով տապալված շահագործողների ռեստավրացիոն հույսերի և փորձերի մասին, ասում է.

«Անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ մի ամբողջ պատմական դարաշրջան է։ Քանի այն չի ավարտվել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը ռեստավրացիայի փորձերի է վերածվում։ Եվ առաջին լուրջ պարտությունից հետո, տապալված շահագործողները, որոնք չէին սպասում իրենց տապալմանը, չէին հավատում դրան, մտքով անգամ չէին անցկացնում այդ, տասնապատկված եռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ աճած ատելությամբ նետվում են դեպի մարտ՝ խլված «դրախտը» վերադարձնելու համար, իրենց ընտանիքների համար, որոնք այնքան քաղցր էին ապրում, և որոնց այժմ «ռամիկ խուժանը» դատապարտում է տնտեսական քայքայման և թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի...)։[1]

1921 թվի փետրվարյան ավանտյուրան հին կարգերի ռեստավրացիայի այդպիսի մի փորձ էր։ Սակայն այդ դավադրությունը ինքնամփոփ երևույթ չէր։ Այն սերտորեն կապված էր միջազգային հակասովետական ռեակցիայի հետ և հանդիսացավ այդ ռեակցիայի արտահայտություններից մեկը Անդրկովկասում։

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստումը և ծագումը տեղի ունեցավ հետևյալ պայմաններում։

Առաջին՝ Անտանտի հին գայլերը՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները բազմապիսի օգնություն ցույց տալով Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերին, նպատակ էին դրել ինչ գնով ուզում է լինի, ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը։ Այդ ուղղությամբ նրանց աշխատանքները ավելի ուժե-

[1] Լենին. *Ընտիր երկեր*, երկհատորյակ, հատ. 2-րդ, Երևան, 1939 թ., էջ 470։

դացան Կարմիր Բանակի կողմից Վրանգելի սպիտակգվարդիական բանդաների ջախջախումից և Ադրբեջանում ու Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։

Ֆրանսիական «Գերագույն կոմիսար» Ա. Շեվալյեն 1920 թվի դեկտեմբերի 16-ին, Թիֆլիսում, ժենշևիկյան Վրաստանի Հիռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում պարզ ու որոշակի հայտարարում է, որ ամբողջ աշխարհի (այսինքն իմպերիալիստների—Ա.Հ.) շահերը պահանջում են Հայաստանի և Ադրբեջանի սովետական իշխանությունների տապալում։ Նա միաժամանակ ժենշևիկյան Վրաստանին խոստանում է զինված օգնություն, եթե երկրում ձգի ռևոլուցիա կամ եթե արտաքին թշնամու կողմից նրա վրա հարձակում տեղի ունենա։[1]

Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին, անգլիական բուրժուազիայի օրգան «Թայմս»-ը գրում է. «Դաշնակների լիդերներն այս ամսի սկզբներին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ, սակայն առանց դրսի օգնության՝ ոչ մի հույս չկա, որ Հայաստանը կարողանա ազատվել բոլշևիկների լծից»։[2]

Եվ իմպերիալիստները կազմակերպում են այդ օգնությունը։ Նրանք օգնում են ոչ միայն նյութապես, ռազմամթերքով, այլև իրենց զորքերով կռվում են սոցիալիստական ռևոլուցիայի դրոշը բարձրացրած Անդրկովկասի աշխատավորության դեմ, համաձայնեցնում և միատեղ մշակում են սովետական կարգերի դեմ Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերի զինված ելույթների պլանները, այդ թվում նաև դաշնակցության փետրվարյան ավանտյուրայի պլանը։ 1921 թվի հունվարին Թիֆլիսում դաշնակցականների ունեցած խորհրդակցությունը, որի քննության առարկան էր Հայաստանում սովետական կարգերի դեմ կոնտրռևոլուցիոն զինված ելույթի նախապատրաստումը, իր աշխատանքներն սկսեց և ավարտեց Անտանտի իմպերիալիստների, ինչպես նաև Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերի և ռուսական սպիտակգվարդիական թափթփուկների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ։

Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների թելադրանքով և օգնությամբ այդ ժամանակ ժենշևիկյան Վրաստանում (Թիֆլիսում) կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի Լեռնային Ռեսպուբլիկայի «Փրկության կոմիտեներ», որոնց առաջնահերթ խնդիրն էր Կովկասում սովետական ռեսպուբլիկաների դեմ կազմակերպել կոնտրռևոլուցիոն զինված ելույթներ։ Խոսելով այդ հարցի մասին, Ս. Օրջոնիկիձեն ասում է. «...Երբ Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ռեսպուբլիկայի և այլ «Փրկության կոմիտեներ»—այդ՝ Կովկասում ամենուրեք սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու պլան էր»։[3]

Ս. Մ. Կիրովը բնութագրելով Վրաստանի ժենշևիկյան կառավարության դերը այդ օրերին, նշել է.

---

[1] *Г. В. Хачапуридзе*,—Борьба за пролетарскую революцию в Грузии, стр. 349—350, Тбилиси, 1936 г.

[2] Бюллетень НКИД РСФСР, № 66, стр. 30—31, 1921 г. 23 февраля.

[3] *Г. К. Орджоникидзе*,—Избранные статьи и речи, 1939 г., стр. 110.

«Վրաստանի կառավարության դիրքը սպասողական է։ Կան տվյալներ ենթադրելու, որ Ադրբեջանի մուսավաթիստների ելույթը Գյանջայում մանրազնին կերպով նախապատրաստվել է հենց Թիֆլիսում։ Մինչև այժմ այնտեղ են մնում Դոնի, Կուբանի, Թերեքի նախկին իշխանությունների ներկայացուցիչները. այնտեղ են գործում նաև Վրանգելի ներկայացուցիչները»։[1]

Մի այլ տեղ այդ առթիվ Ս. Մ. Կիրովն ասում է.

«Հենց այժմ խոսեցի Օրջոնիկիձեի հետ, որը գտնվում է Բաքվում։ Նա հաղորդում է հետևյալը.— Ելիզավետոպոլի (Գյանջայի) նահանգում եղել է մեծ ապստամբություն, որը ճնշվել է վեցօրյա մարտերից հետո։ Ելիզավետոպոլը ուժեղ չափով տուժել է հրետանուց։ Այժմ ապստամբություններ են տեղի ունենում Շուշիում և Ազդանում։ Ապստամբությունները կազմակերպվում են մուսավաթիստների կողմից։ Վրացիները որոշակի կերպով նկատի ունեն Զաքաթալայի գավառը օգտագործել որպես բազա՝ Ելիզավետոպոլի նահանգի դեպքերի կապակցությամբ»։[2]

Երկրորդ՝ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվեց այն ժամանակ, երբ երկիրը՝ իմպերիալիստների կամակատար դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով՝ կանգնած էր անդունդի և կործանման եզրին, երբ հայ ժողովուրդը բզկտվում էր եվրոպական իմպերիալիստների, քեմալական օկուպանտների, վրացական մենշևիկների (Լոռու չեզոք գոտում) և դաշնակների կողմից։ Հաստատվելով այդպիսի ծանր պայմաններում, Սովետական իշխանությունը Հայաստանում ձեռնամուխ եղավ քայքայված երկրում կարգ ու կանոն հաստատելու, բանվորներին և գյուղացիներին սովի ու համաճարակային հիվանդությունների կործանարար վտանգից ազատելու դժվարին խնդրին։ Սովետական իշխանության առաջին երկու և կես ամիսների գործունեությունը խոշոր փոփոխություններ մտցրեց երկրի կյանքում։ Սակայն այդպիսի կարճ ժամանակամիջոցում երբեք հնարավոր չէր վերացնել անտեսական այն քայքայումը և նրա ծանր հետևանքները, որ մնացել էին դաշնակների տիրապետությունից։ Այդպիսի քայքայված տնտեսությունը և նրանից բխող պարենային դժվարությունները հնարավորություն չէին տալիս Հայաստանում պահել մեծ քանակությամբ կարմիր զորամասեր։ Ինչպես նշել է Ս. Օրջոնիկիձեն,[3] այդ զորամասերը կերակրելու հնարավորություն չկար, իսկ մենշևիկյան Վրաստանը փակել էր ճանապարհը Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Հայաստան մեկնող պարենամթերքներով բեռնված գնացքների համար։

Երրորդ՝ դեռևս չէին ամրապնդվել Սովետական իշխանության օրգաններն ու նրա ապարատը։ Զգացվում էր նոր կադրերի խիստ պակաս։ Առանձնապես ծայրամասային և լեռնային շրջաններում (Դարալագյազ, Արագածի ստորոտ, Բաշ-Գառնի, Նոր-Բայազետ և այլն) սովետական ապարատը գտնվում էր ավելի թույլ վիճակում։ Հայաստանի

---

[1] *С. М. Киров.*—Статьи, речи, документы (сборник), том 1, Партиздат, 1936 г., стр. 225.

[2] Նույն տեղում, էջ 226։

[3] *Г. К. Орджоникидзе.*—Избранные статьи и речи, 1939 г., стр. 110.

Ռևկոմը, ինչպես հարկն է, այդ շրջանների հարցով չկրաղվեց։ Իսկ քաղաքական-մասսայական աշխատանքները թերագնահատված էին, մանավանդ տուճկահայ գաղթականության մեջ։ Այդ գույց տալու համար կարելի է հիշատակել հետևյալ փաստը։

Արաղածի ստորոտի 21 գյուղերում վերաբնակված մշեցի և սասունցի գաղթականների ներկայացուցիչը 1921 թվի հունվարի 14-ին Հայաստանի Ռևկոմին ուղղած դիմումի մեջ գրում է.

«Ալագյազում քրդական և հայկական գյուղերում վերաբնակվող մշեցիներս ու սասունցիներս ներկա խնդրագրով դիմում ենք Ձեզ, հայտնելով, որ մենք հնք իսկական բանվոր-որնճպար ժողովուրդը, մեր սրտին շատ մոտ է Խորհրդային իշխանությունը, որը միակ պաշտպանն է բանվոր հողագործ ժողովրդին։

Սակայն չգիտենք ինչ պատճառով, որ նախկին դաշնակների կառավարությունը տապալելն հետո, երկար ատեն է, որ կտիրե այդ մեր սրտի մոտիկ Խորհրդային իշխանությունը և մեզի բոլորովին աչքաթող է արել, մեր մեջ չի ղրկվում կանոնավոր պրոպագանդիստներ, մեր մեջ չի կազմակերպվում Հեղկոմի կոմիսարներ. մեզ չի ղրկվում լրագիր. մենք բոլորովին ղրկված ենք աշխարհային հաղորդակցությունից»։[1]

Օգտվելով այդպիսի դրությունից, սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում մնացած դաշնակցական զինված ուժերը ծպտված կենտրոնանում են վերոհիշյալ շրջաններում։ Հակասովետական ուժեղ ագիտացիային զուգընթաց նրանք վերադասավորում և լրացնում են իրենց ուժերը։ Նույնիսկ մի շարք շրջաններում և գյուղերում (Դարալագյազ, Բաշ-Ղաոնի և այլն) դաշնակները թափանցում են ռևկոմների կազմի մեջ և քայքայիչ աշխատանք են կատարում։

Չորրորդ՝ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ և սխալներ։ Նախ և առաջ անտեսվեցին Անդրկովկասի և Հայաստանի տեղական առանձնահատկությունները։ Լենինը՝ խոսելով Սովետական Ռուսաստանի համեմատությամբ Անդրկովկասի առանձնահատկությունների և դրանցից բխող տակտիկայի մասին, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների Ռեսպուբլիկայի կոմունիստներին գրած իր ծրագրային նամակում նշել է.

«Ոչ թե ընդօրինակել մեր (այսինքն՝ ռուսական կոմունիստների—Ա.Հ.) տակտիկան, այլ ինքնուրույն կերպով կշռադատել նրա յուրահատկության պատճառները, պայմանները և նրա արդյունքները, կիրառել իր երկրում 1917—1921 թ. թ. փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը»[2], որ Անդրկովկասում պետք է ցուցաբերել «ավելի մեղմություն, զգուշություն և գիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ»։[3]

Շեղումներն արտահայտվեցին նրանով, որ Հայաստանի առանձին

---

[1] ՀՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվ, ֆ. № 3/116, գ. № 2. թերթ 79. բնագրի ոճը պահպանված է։

[2] Լենին—Երկեր, հատ. 26-րդ, էջ 271, Երևան, 1931 թ.։ Ընդգծումները բնագրինն են։

[3] Նույն տեղը, էջ 270։ Ընդգծումները բնագրինն են.

շրջաններում գյուղացիության նկատմամբ այդպիսի տակտիկական մոտեցում տեղի չունեցավ։ Խախտելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, շատ դեպքերում վերցնում էին ոչ թե գյուղացիների պարենային ավելցուկը, այլ ամբողջ պաշարը։ Նույնիսկ Երևանում 1921 թ. փետրվարի 7—8-ին տեղի ունեցան ընդհանուր բռնագրավումներ, որոնցից տուժեցին նաև սովետական ծառայողները։ Գյուղերում չքավոր գյուղացիության թույլ կազմակերպվածության հետևանքով ունևորները և կուլակները սարոտաժի էին ենթարկում կառավարության միջոցառումները և սովետական իշխանությունից թաքցնում էին իրենց պարենի պաշարները։ Մյուս կողմից՝ բռնագրավումները կրում էին ծայրահեղ անկազմակերպ բնույթ։ Դրա հետևանքով միջակ գյուղացիության որոշ մասի մեջ դժգոհություններ էին առաջանում։ Այդ դժգոհություններն օգտագործում են սովետական կարգերի երդվյալ թշնամիները—դաշնակները, կադետները, էսեռները, հնչակյանները, սպեցիֆիկները և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաները։ «...Դասակարգային թշնամին քնած չէր։ Նա փորձ էր անում օգտագործելու տնտեսական ծանր դրությունը, փորձ էր անում օգտագործելու գյուղացիների դժգոհությունը»։[1]

Օգտվելով անկազմակերպ բռնագրավումներից և թույլ հսկողությունից, սովետական ապարատի մեջ խցկված դաշնակները սովետական իշխանությանը վարկաբեկելու նպատակով, իրենք ևս կատարում են բռնագրավումներ։ Այդ առթիվ Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի 1921 թվի փետրվարի 10-ի հրամանում ասված է. «Դաշնակների գաղտնի ագենտները խցկված լինելով մեր երիտասարդ խորհրդային հիմնարկությունները, ինքնագլուխ գործունեությամբ և ազգաբնակչության հետ կոպիտ վարվեցողությամբ ի չիք են դարձնում Խորհրդային իշխանությունը։

Վերջին օրերս ինքնագլուխ բռնագրավումներ և խուզարկություններ են նկատվում»։[2]

Հինգերորդ՝ Հայաստանի Ռևկոմը, որի կազմի մեջ խցկված կային դավաճան տարրեր (Ս. Կասյան, Ա. Իեկզադյան և ուրիշներ) և որոնք մերկացվեցին ավելի ուշ, ժողովրդի արյունարբու թշնամիների՝ դաշնակների և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ։

Դաշնակցականների մի մասը, որոնք տակտիկական նկատառումներով քողարկված էին «ձախ» պիտակի տակ, ազատ կերպով մտան էին գալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքում և մյուս շրջաններում. նրանցից ոմանք նույնիսկ տեղավորված էին ղեկավար պոստերում և գաղտագողի դավեր էին նյութում բանվորների ու գյուղացիների սովետական պետության դեմ։ Դրանց թվումն էին փետրվարյան ավանտյուրայի կազմակերպիչներ՝ Դրոն ու Ս. Վրացյանը։

Դրոն՝ այդ տխրահռչակ ջարդարարը և բանդիտը, նույնիսկ հնարավորություն ստացավ մոտ մեկ ամիս և մի քանի օր (1920 թ. դեկտեմբերի սկզբներից մինչև 1921 թ. հունվարի սկիզբը) լինելու Հայաստանի Կարմիր Բանակի հրամանատարը։ Դաշնակների համար այդքան ժամանակը բավա-

[1] Համկ բ)Կ պատմություն. Համառոտ դասընթաց. էջ 337.
[2] «Կոմունիստ» (հայերեն) № 54, 1921 թ. փետրվարի 12, Երևան։

կան էր, որպեսզի՝ օգտագործելով բոլոր լեգալ և անլեգալ հնարավորությունները, առաջ տանեին կոնտրռևոլուցիոն խռովության նախապատրաստումը։ Արտաքուստ ձևանալով սովետական կարգերի կողմնակից և օգտագործելով իր պաշտոնական դիրքը, Երոն, Ս. Վրացյանի հետ միասին, համախմբում է իր համախոհներին, տեղյակ է պահում նրանց Սովետական Հայաստանի ռազմական ուժերին, այդ ուժերի դասավորությանը։ Հայաստանի Կարմիր Բանակի շտաբում և լեկավար պոստերում նա տեղավորում է մի շարք դաշնակցական սպաների, որոնք՝ ծանոթանալով շտաբի գաղտնի նյութերին, սովետական զորքերի դասավորությանը, փետրվարյան ավանտյուրայի նախօրյակին փախչում են Բաշ-Գառնի։ Նրանց թվում էր գնդապետ Ս. Թարխանյանը (Կուռոն), որը ավանտյուրայի ժամանակ գլխավորեց դաշնակների դինված ուժերի ռազմական գործողությունները, իսկ Երևանը գրավելուց հետո դարձավ «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» այսպես կոչված «սպարապետը»։ Բացի դրանից, սովետական ապարատում խցկված էին դաշնակցական և էսեռ ակտիվ գործիչներ—Ս. Վրացյանը, Հ. Քաջազնունին, Լ. Շանթը, Ն. Ադբալյանը, Ս. Տիգրանյանը, Ա. Խոնդկարյանը, Վ. Մինախորյանը և ուրիշները։

Սովետական կարգերի դեմ նախապատրաստվող դավադրությունը կոծկելու և ավելի լայն աղատություն ու վստահություն ձեռք բերելու նպատակով, նրանք արտաքուստ ձևանում էին լոյալ և նույնիսկ սովետական կարգերի կողմնակից։ Խոսելով այդ մասին, Ս. Վրացյանը գրում է. «Մեր երկսի (այսինքն իր և Դրոյի—Ա. Հ.) մտահոգությունն էլ նույնն էր՝ վստահություն ներշնչել բոլշևիկներին, որ մենք իսկապես չենք ձգտում իշխանության և ամեն գնով աշխատում ենք Հայաստանը պահել խաղաղ և քաղաքացիական կռվից ազատ»[1]

1920 թվի դեկտեմբերի կեսերին Երևանում, անլեգալ կերպով կազմակերպվում է դաշնակցության Հայաստանի Կոմիտե, որի գլուխ կանգնում է Ս. Վրացյանը։ Ավանտյուրայի ամբողջ նախապատրաստումը կոմիտեն վերցնելով իր ձեռքը, Դրոյի և գաղտնի գործակալների միջոցով սերտ կապ է հաստատում Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց գլխավոր ուժերը—Բաշ-Գառնի, Աշտարակ, Էջմիածին, Բարալագյաղ։ Էջմիածնի շրջանում և Արագածի ստորոտում ծպտված դաշնակցական բանդաների ղեկավար Կ. Սասունին, խոսելով այդ կապի մասին, գրում է.

«Աղավնատունը (գյուղ՝ Էջմիածնի շրջանում—Ա. Հ.) դառնում է բավական թվով երիտասարդ գործիչների կենտրոնը, ուր ես միայն ինձի հայտնի էի մնում, որպես Դրոյի կողմից հանձնարարություն ունեցող։ Իսկ մյուս ընկերներն ապրում էին դանաղան անուններով որպես պարզ դինվորներ։

Ամեն օր սուրհանդակ էինք գրկում Երևան, ուսկից ստանում էինք թերթեր և օրվա անց ու դարձի մասին ճշգրիտ տեղեկություններ»[2]

Նման պայմաններում Հայաստանի Ռևկոմը թերագնահատեց այն ծանր իրադրությունը, որ ստեղծված էր փետրվարյան ավանտյուրայի

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1923, № 2, էջ 74։
[2] Նույն տեղում, 1925, № 1 (37), էջ 81։

նախօրյակին Հայաստանում։ Այդ ապացուցելու համար կարելի է հիշատակել հետևյալ փաստը։ 1921 թ. հունվարի 24-ին ուղիղ գծով խոսակցություն է տեղի ունենում Հայաստանի Կ(բ)Պարտիայի Կենտկոմի՝ Ադրբեջանում գտնվող ներկայացուցչի և Հայաստանի Ռևկոմի անդամների միջև։ Վերջիններս Հայաստանի դրությունն այդ ժամանակ այսպես են նկարագրել.

«Խորհրդային իշխանության դրությունն երկրի ներսում ամուր է... Դաշնակների կուսակցությունը կատարելապես սնանկացել է։

Բանակն ու աշխատանքը նրանում (Հայաստանում) ընթանում է շատ հաջող»։[1]

Ընորոշ է, որ այդ խոսակցությունը տեղի է ունեցել հենց այն օրերին, երբ դաշնակների լսողությունը Բաշ-Գառնիում չէր ճնշված և երբ դրանից 3 օր հետո՝ հունվարի 27-ին «Կոմունիստ» լրագիրը «Դաշնակցության վերջին ավանտյուրան» վերնագրով առաջնորդողում հիմնական գծերով տալիս է Սովետական Հայաստանի համար ստեղծված ծանր իրադրությունը։ Այնտեղ մենք կարդում ենք.

«...Դաշնակցությունը կամենում է հաճոյանալ նոր արյունհեղությամբ։ Նա փորձում է հայ կոլոնիալ բուրժուազիայի և անգլո-ֆրանսիական կապիտալի օգնությամբ քաղաքացիական պատերազմ սկսել Հայաստանի բանվորագյուղացիական կառավարության դեմ։

Հայաստանում դաշնակցությունն իր բազան է դարձրել դժբախտ Զանգեզուրը։ Այստեղ են հավաքված գանազան Ռուբեն, Նժդեհ և այլ տըխրահռչակ «փաշաներն» ու «հերոսները»։ Զանգեզուր են կուտակվում գանազան կողմերից Հայաստանում «անգործ» մնացած բազմաթիվ մաուզերիստները։

...Մյուս կողմից կապեր են հաստատված Թավրիզի միջոցով անգլիացիների և Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը։ Եթե այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ Վեմալի գորքերի կողմից գրաված վայրերը չմաքրելու մտքին բազմականությունը միանգամայն համապատասխանում է դաշնակցության ռազակարդային ծրագրին* նոր ավանտյուրայի պատկերը կդարձվի միանգամայն։

Ահա այն արտաքին ուժերը* (ինչ խոսք, որ ժենշևիկյան Վրաստանն էլ նրանց շարքումն է), որոնց վրա հիմնված, դաշնակցությունը պատրաստվում է Հայաստանում հակահեղափոխական հեղաշրջում առաջացնել և բանվորների ու գյուղացիների դիակների վրա կապիտալի ու մաուզերի իշխանություն հաստատել»։[2]

Այնուհետև առաջնորդողում խոսվում է այն ներքին ուժերի մասին, որոնց միջոցով և աջակցությամբ կարող է գլուխ դալ նոր ավանտյուրան։

Չնայած ավանտյուրայի այդպիսի որոշակի նախապատրաստությանը, ՀՍՍՌ Ռևկոմը վճռական միջոցների չդիմեց այն կանխելու, բնում խեղդելու համար։ Նա չփոխեց իր օպորտունիստական քաղաքականությունը կոնտրռևոլուցիոն պարտիաների նկատմամբ։

---

[1] ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարա. Արխիվ, կազուկ № 4, 11-րդ բանակին վերաբերող նյութեր, գործ № 1, էջ 47 և 49։

* Ընդգծումները թերթինն են։

[2] «Կոմունիստ» (հայերեն), 27 հունվարի, 1921 թ., № 40։

Իր այդ սխալը Ռեկոմը հետագայում, ավանտյուրան սկսվելուց և Երևանի անկումից հետո միայն հասկացավ։ Մարտի 4-ի նրա կոչում այդ մասին ասված է.

«...Հայաստանի Խորհրդային իշխանության ոչ թե հանցանքը, այլ քաղաքական սխալը կայանում է նրանում, որ նա դաշնակների դավադրության իրագործման միայն նախօրյակին ձեռնարկեց այդ կուսակցության մի շարք ղեկավարների ձերբակալմանը և միայն Երևանից նահանջելու մոմենտին դնդակահարեց մի երկու տասնյակ մաուզերիստներ, խմբապետներ և այլ գարշելիներ, որոնք տակավին ձերբակալությունից առաջ օրենքից դուրս էին հայտարարված»[1]

Դաշնակների, էսեռների և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների նկատմամբ Հայաստանի Ռևկոմի ունեցած օպորտունիստական քաղաքականության դեմ առաջին ահազանգն են տալիս Ալեքսանդրոպոլի բոլշևիկները, որոնք պահանջում են ամենավճռական և անողոք դատաստան տեսնել սոցիալիստական ռևոլուցիայի բոլոր թշնամիների նկատմամբ։ 1920 թվի դեկտեմբերի 21-ին ՀԿ(բ)Պարտիայի Ալեքսանդրոպոլի Կոմիտեն ՀԿ(բ)կենտկոմին (պատճենը Հայաստանի Ռևկոմին) ուղղում է մի գրություն, որտեղ ասված է.

«Ալեքպոլի Կոմկուսակցության քաղկոմը՝ տեղեկանալով այն տակտիկայի մասին, որ ունի Հայաստանի Հեղկոմը ներքին կյանքում ընդհանրապես և հանդեպ ոճրագործ դաշնակները մասնավորապես, որոնց վերաբերմամբ գործադրվում է հեղափոխական ոգուն և գործելակերպին անթույլատրելի փափկություն, որպիսի հանգամանքը շատ թանկ կարող է նստել Կարմիր Հայաստանի առանց այն էլ հյուծված ընչաղուրկներին և անանպաստ ընթացք ունենալ հեղափոխության համար, բողոքում է դորա դեմ և պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել հակահեղափոխության դեմ։

Խմբապետների տեղը ոչ թե Կարմիր Բանակի հրամանատարության կազմի մեջն է, այլ Արտակարգ Հանձնաժողովի նկուղը։

Կորչեն վերջնականապես մաուզերիզմի առաքյալները կարմիր իրականությունից»։[2]

1921 թվի հունվարի սկզբին Դրոն հեռացվում է Հայաստանի Կարմիր Բանակի հրամանատարի պոստից և մեկուսացվում։ Նրա գործակալների մի մասն իրենց փրկությունը գտնում են փախուստի մեջ, իսկ մյուս մասը դեռևս շարունակում է մնալ քողարկված վիճակում և կատարել իրենց քայքայիչ աշխատանքը։

1921 թվի հունվարի կեսերին կոնտրռևոլուցիոն ելույթի նախապատրաստական աշխատանքներն արդեն ավարտվելու վրա էին։ Այդ ժամանակ դաշնակցական զինված բանդաները կենտրոնացել և դասավորվել էին Արագածի ստորոտում, Ն. Ախուրյի, Բաշ-Գառնիի, Նոր-Բայազետի և Դարալագյազի շրջաններում—ըստ Դրոյի և Ա. Վրացյանի մշակած պլանի։

Հաշվի առնելով Սովետական Հայաստանի ծանր դրությունը, որն ավելի բարդացավ դաշնակների նկատմամբ Հայաստանի Ռևկոմի կազմի մեջ խցկված դավաճանների վարած քաղաքականության հետևանքով, Ռուսաս-

[1] ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարտիական Արխիվ, կապուկ № 31, գործ № 5. էջ 3.
[2] ՀՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ. ֆ. № 4/114, գ. № 7, թերթ 8.

տանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կովկասյան Բյուրոյի, Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ 1921 թվի հունվարի վերջերին Հայաստան է գալիս Կովկասյան ռազմաճակատի Ռուսաստանի Արտակարգ Հանձնաժողովի լիազոր Գ. Աթաբրեկյանը. խնդիր ունենալով ծավալել վճռական պայքար դաշնակների և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների դեմ։ Մանրթանալով Հայաստանի վիճակին և իմանալով դաշնակների կողմից նախապատրաստվող դավադրության մասին, Գ. Աթաբրեկյանը, Ս. Օրջոնիկիձեի ցուցումներով, սկսում է ամենաանողոք դատաստան տեսնել ժողովրդի թշնամիների նկատմամբ։ Նա բանտարկել է տալիս բավական թվով դաշնակցական գործիչներ, նրա ղեկավարությամբ հայտնաբերվում և ոչնչացվում են դաշնակների մի շարք գաղտնի կազմակերպությունները։ Սակայն դաշնակցականների մի մասին հաջողվում է թաքնվել։ Գործադրելով բոլոր ջանքերը, նրանք արագացնում են դավադրության նախապատրաստությունը։ Այդ օրերին Զանգեզուրից—որը դեռևս գտնվում էր դաշնակների ձեռքում—գաղտնի կերպով Սովետական Հայաստան են անցնում խմբապետներ Մարտիրոսը և Ենկոն՝ իրենց ուժերով։

Իրենց շուրջը համախմբելով Սովետական Հայաստանում գտնվող կոնտրռևոլուցիոն ուժերը — կուլակությանը, սպեկուլանտներին, խմբապետներին, հոգևորականությանը և այլ կարգի տականքներին, դաշնակները խռովության առաջին փորձը կատարեցին 1921 թվի հունվարի 22-ին՝ Բաշ-Գառնիում։ Այդ օրը նրանք զինված ելույթի միջոցով Բաշ-Գառնին վերցնում են իրենց ձեռքը։ Երևանից մեկնած կարմիր զորամասերը, աշխատավոր գյուղացիության օգնությամբ, նույն ամսի 29-ին լիկվիդացնում են դաշնակների Բաշ-Գառնիի խռովությունը։

Սակայն դաշնակցական բանդաները լիովին չեն հայտնաբերվում ու չեն զինաթափվում։ Խմբապետ Մարտիրոսը իր հիմնական ուժերով թաքնվում է։ Իսկ Երևանից ուղարկված Կարմիր Բանակի զորամասերը իրենց խնդիրն ավարտված համարելով, հրաման են ստանում վերադառնալ Երևան։ Օգտվելով Կարմիր Բանակի հրամանատարության այդ սխալից, հակառակորդը նորից գործելու հնարավորություն է ստանում։ Բաշ-Գառնի են կենտրոնացվում թշնամու հիմնական ուժերը և զենքը։ Նրանք տենդորեն շարունակում են նախապատրաստվել նոր խռովության համար։

Վրացական մենշևիկները, որոնք այդ ժամանակ իշխանությունը դեռևս պահում էին իրենց ձեռքում, երկրում աճող ռևոլուցիոն ճգնաժամի հետևանքով, ծանր կացության մեջ էին և ամեն կերպ աշխատում էին արագացնել դաշնակների կողմից նախապատրաստվող հակառևոլուցիոն ելույթը։

Իսկ երբ դաշնակները սկսում են ավանտյուրան և գրավում Երևանը, մենշևիկյան Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սարախտարաշվիլուց փետրվարի 21-ին ստանում են հետևյալ ողջույնի հեռագիրը.

«Երևան, «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» նախագահ Վրացյանին.

Ջերմ շնորհավորանքներ օտար լծից ձեր երկրի ազատվելու առթիվ։

...Վրաստանի կառավարությունն առաջարկում է ձեզ անմիջապես դուրս գալ մեզ հետ միասին և խփել բոլշևիկների թիկունքին, այդ են պահանջում երկու ժողովուրդների շահերը... Բոլշևիկյան զորքերի բոլոր գրոնները երեկ և այսօր դիշերը ետ են շպրտված թշնամու համար մեծ կո-

բուստներով։ Ֆրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը և նրա էսկադրոնը ռմբակոծում էր բոլշևիկյան զորքերին...

Խնդրում ենք անմիջապես դիմել համապատասխան միջոցների՝ խելքի բերելու համար բոլշևիկների կողմից մոլորեցրած հայ գյուղերը [գյուղացիներին]։ Ձեր միսիան Թիֆլիսում վերականգնված է»։[1]

Կատարելով օտարերկրյա իմպերիալիստների, հայ բուրժուազիայի և անդրկովկասյան կոնտրռևոլուցիայի կամքը և սկսելով փետրվարյան ավանտյուրան, դաշնակները ցանկացան ավելի աչքի ընկնել միջազգային հակառևոլուցիայի մեջ։

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում դաշնակներին խոշոր չափով օգնել է նաև Թյուրքիան։ Այդ մասին Հայաստանում գործող կարմիր զորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի ամփոփագրում ասված է.

«Փետրվարի 16-ին Թյուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մեկնել Շահթախտ, ընդ որում մոտիկ կանգնած գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահթախտի և Նախիջևանի շրջանում։

Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը [փետրվարյան ավանտյուրան] նախապատրաստվում էր վաղուց և հետևանք է դաշնակների ու Թյուրքիայի միջև տեղի ունեցած հարաբերությունների։ Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է և տարվում է Թյուրքերի ղեկավարությամբ և հիմք կա ենթադրելու, որ դա հանդիսանում է Թյուրքերի կողմից որպես հակակշիռ [գործողություն] մեր առաջխաղացմանը Վրաստանում»։[2] ամփոփագրի վերջում ուղղակի նշված է, որ Թուրքերը մասնակցել են Իաշ-Գառնիի խռովության նախապատրաստմանը։

Փետրվարյան ավանտյուրայի ծագումը որոշ չափով հեշտացավ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում գտնված Կարմիր Բանակի զորամասերի զգալի մասը կենտրոնացած էր Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական) և երբ Լոռու չեզոք գոտում ու Վրաստանում մենշևիկների դեմ սկսվեց զինված ապստամբությունը, այդ զորամասերը օգնության գնացին ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Դաշնակները այդ առիթը ևս բաց չթողին։

Ժողովրդի անարգ թշնամիները՝ դաշնակները փետրվարյան ավանտյուրայով երիտասարդ Սովետական Հայաստանը քաշում են քաղաքացիական պատերազմի մեջ։

Սկսվում է Հայաստանի բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարը Սովետական իշխանության ներքին և արտաքին թշնամիների դեմ։

Այդ մարտական օրերին Հայաստանի աշխատավորները հանուն Սովետական Հայրենիքի մարտնչում էին Ս. Օրջոնիկիձեի գլխավորած 11-րդ բանակի հետ կողք-կողքի, բանակ, որն ստեղծվել, կռվել և ամրապնդվել

---

[1] «Ազատ Հայաստան», օրգան «Հայաստանի Փրկության Կոմիտեի», 23 փետրվարի 1921 թ. № 4։

[2] ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից Գարտիական Արխիվ, պատմական մաս, 11-րդ Բանակին վերաբերող նյութերը, կապուկ № 4, գործ № 1, էջ 103։

էր Սովետական Ռուսաստանում տեղի ունեցած երկարատև քաղաքացիական կռիվների քուրայում։

Որո՞նք էին ավանտյուրայի ուժերը։ Նրա հիմնական ուժերն էին մաուզերիստական խմբերը — դաշնակների պարտիական այդ զորամասերը, կուլակությունը, ունևորները, սպեկուլանտները, հոգևորականությունը և հակասովետական մյուս տարրերը։ Դաշնակները, էսեռները, կադետները, սպեցիֆիկները քիչ ջանքեր չթափեցին միջակ և չքավոր գյուղացիությանն իրենց կողմը գրավելու և ավանտյուրային մասնակից դարձնելու համար։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։ Չքավոր գյուղացիությունն ամբողջությամբ, իսկ միջակն իր հիմնական մասսայով կանգնած էր Սովետական իշխանության կողմը և նրա պաշտպանության դիրքերում։ Նրանք զենքը ձեռքներին կռվի դուրս եկան ավանտյուրիստների դեմ։ Դաշնակներին հաջողվեց իրենց հետևից տանել միջակ գյուղացիության միայն շատ չնչին մասը և տաճկահայ գաղթականության այն խավերը, որոնք դաշնակների տիրապետության օրոք տեղավորված էին ավերված աղրբեջանական և քրդական գյուղերում, տիրանալով նրանց հարստություններին։ Սովետական իշխանության հաստատումից հետո տաճկահայ գաղթականության այդ խավերը դաշնակների շովինիստական ագիտացիայի հետևանքով չէին ցանկանում տեղափոխվել իրենց համար հատկացված ուրիշ վայրեր և աղատել մասսայաբար Սովետական Հայաստան վերադարձող աղրբեջանական և քուրդ բնակչության գյուղերը։ Դա գաղթականության մոլորված մասն էր, որը առժամանակ հետևելով դաշնակներին, հետագայում, հենց ավանտյուրայի ընթացքում, հիասթափվում է «Հայրենիքի Փրկության Կոմիտեից», լքում է դաշնակների շարքերը և իր ազատության միակ ուղին տեսնում է սովետական կարգերի մեջ։

Այժմ տեսնենք, թե ինչպես սկսվեցին և զարգացան ռազմական գործողությունները։

ՀՍՍՌ տերիտորիայում գտնված կարմիր զորամասերի հրամանատարը (Մալկաչանով) 1921 թվի հունվարի 3-ի № 1 հրամանով զորամասերը բաժանել էր 4 մարտական խմբավորման։

Աջ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 գումարտակ, 14 հրանոթ, մեկ հեծյալ վաշտ), որի հրամանատարությունը հանձնված էր 2-րդ հրաձգային բրիգադի հրամանատար Երմոլենկոյին, դասավորված էր Բանադիրմադ սար-Գյոդակլու—Բաշ-Արարատ—Օշական—Աշտարակ—Սարդարաբադ գյուղերի և Էջմիածին կայարանի շրջանում։

Ձախ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 գումարտակ, 8 հրանոթ), որի հրամանատարությունը հանձված էր առաջին հրաձիգ բրիգադի հրամանատար Միրիմանովին, տեղավորված էր Ղամարլու—Ավշար—Դավալու շրջանում։

Դարալագյազի ջոկատը (մեկ գումարտակ, 4 հրանոթ) Մելիք-Մուրադյանի հրամանատարությամբ, տեղավորված էր Դարալագյազում, խնդիր ունենալով պաշտպանել Սովետական Հայաստանը Զանգեզուրի դաշնակցական բանդաների հարձակումից։

Նոր-Բայազետի խմբավորումը (մեկ գումարտակ, մեկ լեռնային մարտկոց) տեղավորված էր Նոր-Բայազետում, խնդիր ունենալով՝ ապահովել կարգ ու կանոնն այդ շրջանում։

Բանակի օժանդակը (ընդհանուր կազմով՝ 6 գումարտակ, 12 հրանոթ, 5 հեծյալ վաշտ, 2 զրահագնացք), 3-րդ հրաձիգ բրիգադի հրամանատար Տիմշենկոյի հրամանատարությամբ, տեղավորված էր Երևան, Քանաքեռ—Ներքին-Ախտա—Ելենովկա (Սևան) շրջաններում։

Չունենալով ստույգ հետախուզական տվյալներ հակառակորդի ուժերի և նրանց դասավորության վերաբերյալ, և ճիշտ եղրակացության չգալով Բաշ-Գառնիի հունվարի 22—29-ի խռովությունից, Հայաստանում կանգնած կարմիր զորքերի հրամանատարությունը մինչև փետրվարյան ավանտյուրայի սկսվելը իրեն ենթակա զորքերը չկարողացավ նոր վերախմբավորման ենթարկել, ռազմական հզոր բռունցք ստեղծել ավանտյուրայի հենց սկզբին հակառակորդին արագորեն ջախջախելու համար։ Միայն փետրվարի 15-ին Կարմիր Բանակի հրամանատարությունը ստույգ տեղեկություն է ստանում, որ Բաշ-Գառնիում կազմակերպված է դաշնակների շտաբ՝ գնդապետ Ս. Թարխանյանի ղեկավարությամբ և որ այնտեղ գտնըված խմբապետներ Մարտիրոսի և Խնկոյի բանդաները բավականաչափ մեծացել են։ Բայց նույնիսկ այդ ժամանակ նրան դեռ հայտնի չէր, որ խմբապետ Սմբատի բանդան գտնվում էր Աշտարակի շրջանում, կարո Սասունու բանդան գտնվում էր Ալագյազի ստորոտում, խմբապետ Արամյանի ջոկատը գտնվում էր Վերին և Ներքին-Նեջրլու գյուղերի շրջանում (Երևանից 12 կիլոմետր հարավ-արևմուտք), որ Երևանում գոյություն ունի մաուզերիստների ջոկատ—քաղաքի պարետի օգնական Սարգսյանի ղեկավարությամբ, որ Դարալագյազում կան դաշնակցական զինված ջոկատներ։

Այդ պատճառով էլ, երբ Բաշ-Գառնիում սկսվեց խռովությունը, Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարությունը իր գլխավոր ուշադրությունը դարձրեց միայն Բաշ-Գառնիի վրա, թերագնահատելով մյուս շրջաններից սպասվող վտանգը։

Ահա այդպիսի պայմաններում, 1921 թվի փետրվարի 13-ին Դարալագյազում դաշնակցական բանդաներն սկսում են իրենց զինված ելույթը։ Շրջապատելով Քեշիշքենդը (այժմ Միկոյան) նրանք գազանաբար ժորթոտում ու ոչնչացնում են 11-րդ Կարմիր Բանակի 20-րդ դիվիզիայի 180-րդ գնդի առաջին գումարտակի սպաներին և մարտիկներին։ Բավականական հարձակումը Քեշիշքենդի վրա ազդանշան դարձավ փետրվարյան ավանտյուրայի համար։ Այդ դեպքից մեկ-երկու օր հետո, համարյա միաժամանակ, դաշնակները զինված ելույթներ են սկսում Բաշ-Գառնիում, Ապարանում, Նոր-Բայազետում, Ախտայում։

Բաշ-Գառնիում կենտրոնացած բանդաները, որոնց հետ էր դաշնակների գլխավոր շտաբը, փետրվարի 16-ին սկսում են զինված ելույթը և գրավում են մի շարք գյուղեր (Ոսթոդան, Դամբեգ, Արամուս, Բաշգեղ, Քերփչլու, Ողջաբերդ)։ Նրանք ուղղություն են վերցնում դեպի Քանաքեռ՝ հյուսիսային կողմից Երևանին հարվածելու համար։ Դաշնակցական բանդաներից մեկը խնդիր ունենալով կտրել բոլոր տեսակի հաղորդակցությունը Երևանի և Ելենովկա—Ռիլիջանի միջև, ուր գտնվում էին Կարմիր Բանակի ուժերի մի մասը, Բաշ-Գառնիից շարժվում է դեպի Էյլարու։ Նույն սրբ այդ խումբը գրավում է Էյլարը, Մհուբը և կտրում հեռախոսային կապը Երևանի ու Ելենովկայի միջև։ Բաշ-Գառնիի շրջանից մեկ ուրիշ

բանդա հարձակվում է Շորբուլաղի վրա՝ խնդիր ունենալով գրավել այդ գյուղը և Երևանին հարվածել արևելյան կողմից։ Առաջին հարձակման ժամանակ Շորբուլաղում գտնվող Կարմիր զորամասերի ուժեղ հարվածների տակ նրանք ետ են նահանջում դեպի Քերփչլու։ Նուտով ստանալով նոր և մեծ համալրում, դաշնակները կրկին հարձակվում են Շորբուլաղի վրա և փետրվարի 16-ի երեկոյան գրավում այն։ Հաջորդ օրը, ուժեղ մարտերից հետո, հակառակորդը նորից ետ է շպրտվում Շորբուլաղից։ Դարձյալ Բաշ-Դաոնիի շրջանից մի այլ բանդա փետրվարի 16-ին ուղղություն է վերցնում դեպի Վ. Աղբաշ, խնդիր ունենալով կտրել Երևանից դեպի Սովետական Նախիջևան տանող երկաթգիծը և Սովետական Հայաստանի մայրաքաղաքին հարվածել հարավ-արևելքից։ Նույն օրը երեկոյան նրանք գրավում են Ջանաթլու գյուղը։

Փետրվարի 16-ին Աշտարակ — Էջմիածին — Երևան և Աշտարակ — Երևան ուղղություններով իրենց հարձակումն են սկսում Արագածի ստորոտում կենտրոնացած՝ խմբապետներ Սմբատի և Կարո Սասունու բանդաները։ Ճանապարհին սրանց միանում են խմբապետ Արամյանի ուժերը։ Նրանց խնդիրն էր գրավել Աշտարակը, Էջմիածինը, այնուհետև մի մասով շարունակել առաջխաղացումը դեպի Երևան, իսկ մյուս մասով՝ դեպի Ուլուխանլու—Աղհամզալու՝ կտրելու հաղորդակցությունը Երևանի և Հայաստանի միջև ու միանալու Բաշ-Դաոնիից դեպի Վ. Աղբաշ շարժվող ուժերին։

Փետրվարի 17-ին Աշտարակի և Էջմիածնի շրջաններն արդեն գտնվում էին խռովարարների ձեռքում։ Հակառակորդն սկսել էր սպառնալ Սովետական Հայաստանի մայրաքաղաքին։ Այդ լուրը լսելով, Երևանում թաքնված դաշնակ-մաուզերիստներն ավելի մեծ աշխուժություն են ցույց տալիս։ Նրանք ուժեղացնում են հակասովետական ագիտացիան։

Մոլեգնող կոնտրռևոլուցիային հարվածելու և մայրաքաղաքը պաշտպանելու համար Երևանի կարմիր զորամասերը և աշխատավորները բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ ձեռք են առնում մի շարք միջոցներ։ Կոմունիստներից և կոմերիտականներից կազմակերպվում է կամավորական ջոկատ, զինվում է տեղական միլիցիան, փետրվարի 15-ին Երևանում իր աշխատանքներն ավարտած անպարտիական կարմիրբանակայիններ առաջին կոնֆերանսի պատգամավորներից ու ռազմա-քաղաքական դպրոցի ունկնդիրներից կազմակերպվում է հատուկ ջոկատ։ Նահիջախից Երևան է մեկնում 178 րդ դունդը։ Չինաթափ է արվում դաշնակների ազդեցության տակ գտնվող ճարտարապետական զորամասը, որը կազմված էր գերազանցապես բուրժուական և ունևոր ընտանիքների զավակներից։

Բայց հարձակման նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում խռովարարները։ Երևանում և նրա շրջակայքում, երբ դեռ շարունակվում էր կարմիրների վերախմբավորումն ու դասավորումը, փետրվարի 17-ին թշնամին հյուսիսից և արևմուտքից արդեն շրջապատել էր մայրաքաղաքը։ Չնայած գերազանց ուժերով տեղի ունեցած կատաղի հարձակումներին, Շորբուլաղի և Վ. Աղբաշի շրջակայքում փետրվարի 17-ին հակառակորդի ջոկատները ոչ միայն հաջողություններ չեն ունենում, այլև ետ են շպրտվում իրենց համար մեծ կորուստներով։ Նույն օրը վճռական մարտեր են

տեղի ունենում Քանաքեռում։ Թշնամու դեմ մարանչող կարմիր զորամասերին օգնելու նպատակով փետրվարի 17-ին Երևանից դեպի Քանաքեռ է մեկնում մի ջոկատ՝ Երմոլենկոյի հրամանատարությամբ։ Այդ ջոկատը Քանաքեռի տակ շրջապատվում է թշնամու կողմից և 4 ժամից ավելի մարտնչում է թվով մի քանի անգամ գերազանցող հակառակորդի դեմ։ Կապի բացակայության և օգնություն չստանալու պատճառով Երմոլենկոյի ջոկատը համարյա ամբողջությամբ ոչնչացվում է։ Այդ մարտում հերոսաբար սպանվում է նաև ջոկատի հրամանատար Երմոլենկոն։ Փետրվարի 17-ին կատաղի մարտեր են տեղի ունենում նաև Երևանի ծայրամասերում՝ Կոնդի շրջակայքում և Զանգուի կամուրջի համար։

Փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը դաշնակների բանդաներն այնքան են նեղացնում Երևանի օդակումը, որ նրանց ուժերի մի մասը, օգտվելով գիշերային խավարից, Կոնդի և Նորքի կողմից թափանցում է քաղաք և միանում Երևանում գտնվող մաուզերիստներին։ Նրանք գրավում են մի շարք շենքեր։ Փետրվարի 18-ի վաղ առավոտյան Երևանի փողոցներում սկսվում են կատաղի կռիվները։ Շատ տեղերում հրաձգությունը փոխվում է սվինամարտի և բռնցքամարտի։ Մի քանի ժամ տևող փողոցային այդ մարտերում կոմունիստները, կոմերիտականները, անպարտիական կարմիրբանակայիններն ու բանվորները ցույց են տալիս նվիրվածության ու հերոսության օրինակներ։ Քաղաքի գլխավոր փողոցներն ու շենքերը մի քանի անգամ անցնում են ձեռքից-ձեռք։ Մարտերը դեռ շարունակվում էին, երբ Աշտարակի, Էջմիածնի և Քանաքեռի կողմից Երևան են հասնում մաուզերիստների նոր ուժերը, մինչդեռ կարմիրների օժանդակ ուժերն ուշանում էին։ Դաշնակները շրջապատում են Երևանի փողոցներում մարտնչող կոմունիստական ջոկատը։ Սակայն վերջինս առաջ սարանումների նետվում է սվինամարտի և ճեղքելով գաշնակների օղակը, անցնում է դեպի Երևանի երկաթուղային կայարանը։ Երևանի պաշտպանությունն ամրացնելու համար Շահթախտից մեկնած 178-րդ գունդը «Աղաստամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենավարի սարոտաժի պատճառով ճանապարհին պահվում է սահմանված ժամանակից ավելի։ Սաբոտաժի հեղինակներն անմիջապես հայտնաբերվում և ոչնչացվում են։ Սակայն գունդը Երևան է հասնում մի քանի ժամ ուշացումով, այն ժամանակ, երբ քաղաքի խոշոր մասը գտնվում էր դաշնակների ձեռքում, իսկ կարմիրներն իրենց հիմնական ուժերով սկսել էին կենտրոնանալ Երևանի երկաթուղային կայարանի շրջակայքում։ 178-րդ գնդի ուշացումը վճռական նշանակություն ունեցավ Երևանի անկման գործում։ Դնդի գալուց հետո տեղի ունեցան մի շարք ուժեղ մարտեր, նրա մի մասը հետապնդելով դաշնակներին, հասավ մինչև Նորքի շրջակայքը։ Բայց արդեն ուշ էր, ստրատեգիական կարևոր վայրերը գտնվում էին դաշնակների ձեռքում։ Երևանի պաշտպանությունը վտանգված էր։

Նման պայմաններում Երևանում մնալը և այնտեղ հակառակորդի հետ մարտեր ունենալը կարող էր կորստաբեր լինել։ Ուժերը պահպանելու, Սովետական Նախիջևանի հետ հաղորդակցության միակ միջոցը՝ Երևան—Ղամարլու—Ջուլֆա երկաթգիծը ձեռքից բաց չթողնելու և հետագա վճռական մարտերը շարունակելու նպատակով Կարմիր Բանակի հրամանատարությունը որոշում է թողնել Երևանը։

Թողնելով Երևանը, փետրվարի 18-ին Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերը 178-րդ գնդի և «Ադատամարտ» ու «Մուսայելյան» զրահապնագքների պաշտպանության տակ սկսում են ետ քաշվել դեպի Ղամալու։ Նրանց հետ էին Հ Կ (բ) Պ Կենտկոմը, Հայաստանի Ռևկոմը, ՀՍՍՌ մի շարք հիմնարկներ՝ իրենց աշխատակիցներով։ Այդ զորամասերն իրենց հետ ունեին 3 շոգեքարշ, 60 վագոն (որից 11 ը բեռնված էր պարենով և ռազմամթերքով)։ Նույն օրը երեկոյան հասնելով Ղամարլու, նրանք միանում են այնտեղ գտնվող Հայկական առաջին հրաձիգ բրիգադին. որի կոմիսարն էր Լիպարիտ Մխչյանը։

Ստրատեգիական նկատառումներով ետ քաշվելով Ղամարլուից. փետրվարի 19-ին կարմիր զորամասերն ամրանում են Ղարարաղլար—Դաշլու Մեյուկ-Վեգի—Ենգիջա—Կարալար—Քիչիկ-Վեգի հատվածում։

Սկսվում է Ղամարլու—Վեղիուս մեկուսացած և քանակով մի քանի անգամ գերազանց ուժերով շրջապատված Կարմիր Բանակի զորամասերի՝ իր բացառիկ, հերոսական գործողություններով հարուստ 45-օրյա մարտերի շրջանը։ Այդ զորամասերը Ս. Օրջոնիկիձեից մարտական խնդիր էին ստացել — մինչև օգնության հասնելը պահպանել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Այդ զորքերի կոմիսարը գրում է. «Անձնապես ընկ. Սերգոյից—Իայիլովի (Բաքվի) ռադիոկայանից ստացել էինք ծածկագիր մարտական առաջադրանք՝ ինչ գնով էլ լինի պահել Սովետական իշխանությունը մինչև օգնության հասնելը»։

Փետրվարի 18-ին դաշնակցական բանդաների ձեռքումն էին գտնվում Երևանը, Էջմիածնի, Աշտարակի, Ապարանի, Ախտայի, Կոտայքի, Նոր-Բայազետի և Դալալագյազի շրջանները։ Այդ օրը Երևանում կազմակերպվում է դաշնակցականների այսպես կոչված «նոր կառավարությունը»՝ «Հայրենիքի Փրկության Կոմիտեն», որի գլուխ կանգնում է Ս. Վրացյանը։ Գրավված շրջաններում դաշնակները կազմակերպում են «Հայրենիքի Փրկության» շրջանային կոմիտեներ. բոլոր այդ օրգանների մեջ ամենուրեք իրենց ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկնում էսեռները, կադետները, Հայաստանի սոց-գեմ. պարտիան (սահմանադրական). հնչակյանները, հայ ժողովրդական պարտիան և մյուս կոնտրռևոլուցիոն տականքները։ Ընդդեմ սովետական կարգերի տեղի է ունենում այդ պարտիաների համագործակցությունը։ Փետրվարի 25-ին Երևանում, դաշնակների նախաձեռնությամբ և մասնակցությամբ հրավիրվում է էսեռների, կադետների, սպեցիֆիկների, հնչակյանների, հայ ժողովրդական պարտիայի ներկայացուցիչների միացյալ խորհրդակցություն, որը քննության է առնում «Հայրենիքի Փրկության Կոմիտեին» օգնություն ցույց տալու հարցը։ Խորհրդակցությունը «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» նախագահին ուղղում է մի գրություն, որի մեջ ասված է.

«Համաձայն ձեր հրավերի, Հայաստանում գործող վեց քաղաքական կուսակցությունների երկ-երկու ներկայացուցիչներ համախմբվելով, որոշեցին կազմել միջկուսակցական խորհուրդ, բաղկացած երկու սեկցիաներից. առաջինը պիտի զբաղվի՝ գործող բանակի համար պարեն ժողովելով, իսկ երկրորդ սեկցիան՝ ժողովրդի (այսինքն՝ կուլակների, սպեկուլանտների... Ա. Հ.) եռանգը վառ պահելու համար՝ լայն պրոպագանդա և ագիտացիա մղելով»։[1] Այդ միջպարտիական սրդանի մեջ էին մտնում վերոհիշյալ

բոլոր պարտիաների ներկայացուցիչները, իսկ նրա գլուխ, որպես նախագահ, կանգնած էր սոցիալիստի դիմակի տակ թաքնված սպեցիֆիկ Բ. Իշխանյանը։

Ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում այդ միջպարտիական օրգանը ծառայելով «Հայրենիքի Փրկության Կոմիտեին», նրա հետ միասին պատճառ է դառնում հազարավոր աշխատավորների սպանությունների ու սովամահության։

Կոնտրռևոլուցիային մատուցած իր ծառայություններով աչքի է ընկնում նաև Հայաստանի հոգևորականությունը։ Հօդուտ «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» նա ծավալում է հակասովետական պրոպագանդա, կազմակերպում է գինված խմբեր, խոշոր նյութական միջոցներ է հատկացնում «Հայաստանի Փրկության Կոմիտեին» և դաշնակցական մուզերիստական խմբերին։

Դաշնակների կողմից գրավված վայրերում նորից ստեղծվում է այն կոշմարային դրությունը — թալանը, բռնությունները, կամայականությունը և տեռորը— որին վերջ էր տրված Հայաստանում սովետական կարգերի հաստատումով։ Ամենուրեք բանտերը լցվում են կոմունիստներով, կոմերիտականներով և ռևոլուցիոն բանվորներով ու գյուղացիներով։ Լայն ծավալ է ընդունում հակասովետական պրոպագանդան։ «Նրանք հանդուրժել չէին կարող Խորհրդային իշխանությանը, ասում է Ս. Օրջոնիկիձեն.— ուստի աշխատավոր մասսաներին հավատացնում էին, որ բոլշևիկների զարմիր բատալիոնները կացիններով են գալիս ու կացնահար պիտի անեն Հայաստանի բոլոր մասսաներին, չխնայելով անգամ փոքրիկ մանուկներին, կանանց ու ծերերին»։

Հայաստանում տեղի ունեցած կոնտրռևոլուցիայի այդ մասնակի և ժամանակավոր հաջողությունները ոգևորում են իրենց հոգևարքի վերջին օրերն ապրող վրացական մենշևիկներին, որոնք ինչպես տեսանք, դաշնակներից պահանջում էին միանալ իրենց հետ և խփել բոլշևիկներին թիկունքից։

Խոսելով դաշնակների և մենշևիկների դրկախառնվելու մասին, Ս. Օրջոնիկիձեն ասում է.

«Նոյ Ժորդանիան իր վերջին ճառերից մեկում հարձակվեց հայերի վրա և կոչ արեց դուրս գալ խաչակրաց արշավանքի նրանց դեմ։ Բայց նույն Նոյ Ժորդանիան մինիստր Սարախտարաշվիլու հետ միասին հաջորդ օրը սիրաշահության ու փոխադարձ ողջույններ փոխանակեց դաշնակ Վրացյանի հետ — որը Երևանում կանգնել էր այսպես կոչված «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» գլուխ— և խնդրեց նրան հարվածել բոլշևիկներին թիկունքից։ Իսկ Վրացյանն առաջին իսկ դիմումի մեջ, որով նա մենշևիկներին հայտնեց իր քաջագործության մասին, խնդրեց զգեստավորում և մթերապաշար»։

[1] ՀՊՄՌ Գեն. կենտր. Արխիվ. ֆ. № 1/37, գ. № 2, թերթ 21։

[2] Ս. Օրջոնիկիձե. «Նոր՝ Երևանի պատերազմական պրոֆակտիվի հիստում», «Կոմունիստ» № 70, 1921 թ. ապրիլի 19, Երևան։

[3] Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, стр. 107.

Չնայած գործադրված բոլոր ճիգերին ու ջանքերին սկսած կատաղի հակասովետական պրովակացիաներից և վերջացրած բռնություններով ու տեռորով դաշնակներին ու նրանց հետ գնացող մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաներին չհաջողվեց հենարան գտնել գրաված շրջանների բանվորների ու աշխատավոր գյուղացիների մեջ։ Ամենուրեք աշխատավորությունը նրանց նկատմամբ ցույց տվեց իր դայրույթն ու ատելությունը և հանդես եկավ սովետական կարգերի պաշտպանությամբ։

Ահա բազմաթիվ փաստերից մի քանիսը։

Երբ սկսվեց ավանտյուրան, Ն. Ախտայի շրջանի Ռնգամալ և Քարվանսարա (այժմ Աթարբեկյան) գյուղերի աշխատավորներն իրենց պարտիզանական ուժերով համառ դիմադրություն ցույց տվեցին դաշնակների խմբերին, որոնք զինված էին գնդացիրներով և հրանոթներով։ Երկու-երեք օր անընդհատ ուժեղ կռիվներ են տեղի ունենում այդ գյուղերի համար։ Դաշնակներին հաջողվում է վերոհիշյալ գյուղերը գրավել միայն այն ժամանակ, երբ մեծ քանակությամբ նոր ուժեր են ստանում։ Սակայն Ռնգամալի և Քարվանսարայի պարտիզաններն անձնատուր չեն լինում։ Նրանք, թվով 300 հոգի, անցնում են Դղմաշեն, ապա Ելենովկա՝ կարմիր զորքերի կողմը։[1]

Թալինի շրջանի աշխատավոր գյուղացիները, չնայած դաշնակների գործադրած բոլոր միջոցառումներին, հրաժարվում են նրանց կռվող ուժեր տալ։ Այդ առթիվ «Հայրենիքի Փրկության» Թալինի շրջանային կոմիտեն «Հ. Փ.» Էջմիածնի գավառային կոմիտեին 1921 թ. մարտի 25-ին գրում է, որ շրջանի 8 գյուղերում (անունները չեն հիշատակված), չնայած շրջանային կոմիտեն հրավիրել է «կրկնակի հրապարակային բացատրական ժողովներ օրվա ժամենտի մասին և կոչ է արել մասնակցելու ներկա հեղաշրջմանը, բայց գժբախտաբար այդ աշխատանքը մնացած է ապարդյուն։

Կոմիտեն նկատելով այդ անհաջողությունը, փոխեց իր աշխատանքի ձևը և իր ընկերներեն երկուքին, որոնք փափագ հայտնած էին կամավոր արձանագրվել և ճակատ մեկնել, որոշեց թույլ տալ, որպեսզի հրապարակ գան և կոչ անեն երիտասարդության իրենց հետևելու համար, բայց և այնպես այդ աշխատանքն անցավ ապարդյուն, որից հետո որոշվեց բռնի կերպով հավաքել 20--30 տարեկաններին և ուղարկել»։ Այս մեթոդով նրանց հաջողվում է 8 գյուղից հավաքել միայն 41 «կամավորներ» և միլիցիայի զինված պահակներով ուղարկել Էջմիածին։ Չնայած դրան, տեղ են հասնում միայն 25 հոգի։ Իսկ մնացածը ճանապարհից փախչում են։

Էջմիածնի գավառի 1-ին շրջանի միլիցիապետը 1921 թ. մարտի 18-ին նույն գավառի «Հ. Փ. Կ.»-ի նախագահին գրում է, որ «Սամադար գյուղի կամավորների կազմակերպելը եղավ, բայց այս գիշեր կեսից ավելը փախել են, ուստի խնդրում եմ գրսի ուժ ուղարկել անձամբ Սամադար գյուղի համար»։[3]

Թալինի շրջանի Գյոդլու գյուղի քահանան 1921 թվի մարտի 23-ին Էջմիածնի գավառի «Հ. Փ. Կ.»-ին գրում է, որ շրջանում «ամեն տեսակ

[1] Տես ՀՍՍՌ Գեն. կենտր. Արխիվ, ֆ. № 171, 150 գ. № 8, թերթ 4։
[2] ՀՍՍՌ Գեն. կենտր. Արխիվ, ֆ. № 2/38, գ. № 31, թերթ 17։
[3] ՀՍՍՌ Գեն. կենտր. Արխիվ, ֆ. № 2 38, գ. № 17, թերթ 10։

հակակառավարական գործեր կկատարվեն, շատ տեղերում կառավարության հրամանները երբեք չեն հարգվեր և ըմբոստության փորձեր կըլլան կառավարության կողմե եկած պաշտոնյաներու հանդեպ։ Տեղական դինվորությունը... երբեք տրամադրություն չունի զինվորություն ընելու կամ պատերազմ գնալու, շատ անգամ զինվորներու կողմե առարկություն կըլլա։ Թե «չգիտենք պատերազմ երթանք, բայց ուր դեմ կռվենք, եթե ոչ մեր եղբայրներու և հարազատներուն դեմ»[1]։ Դաշնակցական գործիչներից մեկը՝ խոսելով ժողովրդի այդպիսի վերաբերմունքի մասին, վշտացած գրում է, որ «ժողովուրդը գտնվում է գիպնոտիզմի ազդեցության տակ»[2] և չի ցանկանում օգնել իրենց։

Չնայած «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» և նրա շրջանային բաժանմունքների արխիվները մեզ հասել են ոչ ամբողջությամբ,[3] բայց եղած սակավ նյութերի մեջ կարելի է գտնել բազմաթիվ այդպիսի փաստեր, որոնք ցայտուն կերպով ցույց են տալիս աշխատավորների ատելությունը դեպի ավանտյուրիստները և սերը դեպի սովետական կարգերը։

Ժողովրդի այդպիսի վերաբերմունքի շնորհիվ դաշնակներին չհաջողվեց ընդարձակել գրավված շրջանները և տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Ղամարլուում, Վեգիում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղազախում— Սովետական իշխանությունը կանգուն մնաց, որին միացավ նաև մենշևիկյան լծից ազատագրված Լոռին։

Աշխատավոր ժողովրդի մեջ չունենալով հենարան, «Հայրենիքի Փրկության Կոմիտեն» գիմում է արտաքին օգնության։ Նա մեծ հույս էր դնում մենշևիկյան Վրաստանի վրա, սակայն 1921 թվի փետրվարի 25-ին մենշևիկների իշխանությունն արդեն տապալված էր և Վրաստանում ծածանվում էր Սովետների կարմիր դրոշը։ Դա ծանր հարված էր դաշնակ ավանտյուրիստներին։ Վրաստանի Կ(ր) Պ Կենտկոմի և Ռևկոմի օրգան «Կոմունիստը» (վրացերեն) իր առաջնորդողում անդրադառնալով այդ հարցին, նշել է. «Մենշևիկյան կառավարության պարտվելուց հետո Վրաստանում, Խորհրդային ուժերով շրջապատված Երևանի «կղզին» տագնապալից դրության մեջ ընկավ։ Նրա բախտը վճռվեց այն ժամանակ, երբ քաղաքացիական պատերազմում պարտված Մորդանիայի կառավարության անձնատուր լինելը փաստ էր դարձել»։[4]

Զգալով իրենց համար ստեղծված ծանր դրությունը, Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ կռիվը շարունակելու համար Ս. Վրացյանը «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» անունից դիմում է Թյուրքիայի օգնությանը։ Նա սկսում է տեսակցություններ ունենալ Թյուրքիայի արևելյան ֆրոնտի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի Երևանի ներկայացուցիչ Ռահաեդդինի հետ, 1921 թվի մարտի 1 ին վերջինիս միջոցով Թյուրքիայի ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղղում, որի մեջ ասված է.

---

1 ՀՍՍՌ Գետ, կենտր Արխիվ, ֆ. № 2 38, գ. № 31, թերթ 11—13։

2 ՀՍՍՌ Գետ. կենտր. Արխիվ, ֆ. № 2/38, գ. 31, թերթ 26։

3 Ավանտյուրայի լիկվիդացման օրերին դաշնակներն իրենց արխիվների մի մասը այրեցին, ոչնչացրին, իսկ մի մասն էլ փախցրին իրենց հետ։

4 Այս հատվածը մեջ է բերված «Կարմիր Աստղի» № 93-ից (1921 թ. ապրիլ 9), որտեղ տպված է «Կոմունիստի» վերոհիշյալ առաջնորդողը։

«Հայրենիքի Փրկության Կոմիտեն»... խնդրում է Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն երկու ազգերի փոխադարձ շահերի ըստ կարելույն շուտ՝

1. Երևան վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին։

2. Տալ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք. առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ, և կամ Ռոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ։

3. Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է զտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և եթե կարող է, ի՞նչ չափով և եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում։

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը (այսինքն՝ «Հայրենիքի Փրկության Կոմիտեն» — Ա. Հ.) հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրոպոլի դաշնագրից[1] և որոնք խանգարվել էին բոլշևիկների իշխանության ժամանակ[2]։

Քեմալական Թյուրքիան դաշնակներին օգնում է նրանով, որ իր ձեռքում գտնվող Ալեքսանդրոպոլում ու նրա գավառում ավելի է ուժեղացնում հալածանքները բոլշևիկյան կազմակերպությունների և ժողովրդի նկատմամբ, զրկելով նրանց Հայաստանի մյուս գավառներում ու շրջաններում դաշնակների դեմ մարտնչող բանվորներին ու գյուղացիներին օգնելու հնարավորությունից։

Այդ օրերին «Հայրենիքի Փրկության Կոմիտեն» և նրա օրգան «Ազատ Հայաստանը» ժոլեգին ագիտացիա են մղում հօգուտ Թյուրքական օրիենտացիայի, փորձելով կրկին ժոլորության մեջ գցել հայ ժողովրդին, որը իր դառն փորձով բազմաթիվ անգամ տեսել էր Թյուրքիայի ջարդարար քաղաքականությունը։ Բոլշևիկների նկատմամբ ունեցած գաղանային ատելությունը դաշնակներին «բարեկամացնում» է Թյուրքիայի հետ։

«Ազատ Հայաստան» թերթը խոսելով այդ հարցի մասին, իր առաջնորդողներից մեկում գրել է.

«Հայ և Թուրք անհաշտության ու թշնամության մեկ ուրիշ, թերևս ավելի խոշոր պատճառն էր նաև հայ ժողովրդի անուղղելի ռուսասիրությունը, որ հասնում էր ինքնասպան ժոլության աստիճանին։ Ապա՝ «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը։ Որովհետև Տաճկաստանն է այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որ անմիջապես և կենսապես շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրմամբ»։[3]

Մյուս կողմից դաշնակները դիմում են անգլո-ֆրանսիական իմպերիալիստների և Իրանի խանների օգնությանը (Զանգեզուրում պատսպարված բանդիտ Նժդեհի միջոցով), որոնցից ստանում են նյութական ու ռազմական օգնություն։

---

[1] Խոսքը 1920 թվի դեկտեմբերի 2-ի պայմանագրի մասին է։

[2] ՀՍՍՌ Գլխ. կենտր. Արխիվ, ֆ № 4/114, գ. № 128, թերթ 12։

[3] «Ազատ Հայաստան», օրգան «Հայաստանի Փրկության Կոմիտեի», 15 մարտի, 1921 թ. Ընդգծումը թերթինն է։

Սակայն ոչ մի ուժ ավանտյուրիստներին փրկել չէր կարող հերոսական Կարմիր Բանակի և նրա թիկունքում կանգնած Հայաստանի բանվորների ու աշխատավոր գյուղացիների հուժկու հարվածներից։

Դաշնակների կողմից Երևանի և յոլուս շրջանների գրավումը Հայաստանի աշխատավորության մեջ առաջացրեց բուռն գայրույթ։ Ամենուրեք տեղի ունեցան աշխատավորների միտինգներ, որտեղ ընդունված բանաձևերում դատապարտելով ավանտյուրիստների դավադրական գործողությունները, նրանք որոշեցին գենք վերցնել, գնալ ճակատ և կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ոնոլուցիոն դատաստան տեսնել ժողովրդի թշնամիների նկատմամբ։

Ղազախի Քարվանսարա (Իջևան) գյուղում տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգի բանաձևում ասված է.

«Քարվանսարայի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ի կիրակնօրյա իրենց միտինգում լսելով զեկուցում Հայաստանում կատարվող դեպքերի մասին՝ հաստատ խոսք են տալիս գենքը ձեռքից վայր չդնել մինչև Հայաստանում հաստատվի վերջնականապես բանվորների և գյուղացիների իշխանությունը. մենք խոսք ենք տալիս վճռական հարվածով ջախջախել հակահեղափոխական խմբապետների, կուլակների գլուխը, որպեսզի նրանք այլևս չերազեն իրենց նախկին գարշելի իշխանությունը վերականգնելու մասին։ Բոլորս մի մարդու պես կգնանք մեր կուսակցության (բոլշևիկների) հետևից՝ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին վերջնականապես ազատելու համար թե ներքին, և թե դրսի հակահեղափոխական լծից։

Կեցցե հեղափոխական բանվորների ու գյուղացիների Կարմիր Բանակը։

Կեցցե Խորհրդային Հայաստանը։

Կեցցե Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սերտ միությունը»։[1]

Նույն գավառի Թալա գյուղի աշխատավորների միտինգում ընդունված բանաձևում ասված է.

«Մենք՝ Թալայի գյուղացիներս՝ լսելով զեկուցում ներկա մոմենտի մասին, վճռեցինք միացած ուժերով կռվել դաշնակների բանդաների դեմ, թույլ չտալ, որ վերականգնվի նրանց իշխանությունը, որովհետև մեզ համար միակ ցանկալի իշխանությունը Խորհրդային իշխանությունն է։ Թող կորչեն աշխատավոր ժողովրդի թշնամիները։

Կեցցե Խորհրդային Հայաստանը»։

Ջարխեչ գյուղի աշխատավորների բանաձևը վերջանում է հետևյալ խոսքերով. «Մինչև վերջնական հաղթանակը կռվել խմբապետների և մաուզերիստների դեմ»։

Փետրվարի 26-ին Ղազախի գավառի Քարվանսարա, Սև Քար, Աչաջուր և այլ շրջանների ու գյուղերի աշխատավորներից արդեն ձևակերպված էր կոմունիստական գումարտակը, որը նույն օրը մեկնում է Դիլիջան—Ելենով-

[1] «Կարմիր Աստղ», օրգան Վրաստանի Հոմպարտիայի Կենտկոմի և Ռևկոմի, № 11 1921 թ. մարտի 11, Թիֆլիս։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

կա՝ օգնելու դաշնակների դեմ կռվող Կարմիր Բանակի զորամասերին։ Այդպես են վարվում նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ղամարլուի, Վեդիի, Ելենովկայի և մենշևիկյան լծից նոր ազատագրված Լոռու չեզոք գոտու բանվորներն ու աշխատավոր գյուղացիները։

Նոր-Բայազետի ջոկատը ձևավորվեց Օրդակլու գյուղում, փետրվարի վերջերին, մարտական գործողությունների ընթացքում։ Նա ստեղծվեց անջատ կոմունիստական խմբակներից—Բաքվի բանվորներից, Շամշադինի, Իջևանի, Նոր-Բայազետի, Դիլիջանի աշխատավոր գյուղացիներից, որոնց ընդհանուր թիվը հասնում էր մոտ 500-ի։ Այս ջոկատը հերոսական գործ կատարեց Նոր-Բայազետի համար մղված կռիվներում։ Մարտի 15-ի փողոցային մարտերում ջոկատը հավասարեն կռվեց դաշնակների գերազանց ուժերի դեմ և պատվով կատարեց իր մարտական խնդիրը՝ հակառակորդին դուրս շպրտելով քաղաքից։[1]

Նոր-Բայազետի համար մղված այդ կռիվներում Կարմիր Բանակի զորամասերին մեծ օգնություն ցույց տվեցին Ալեքսանդրովկայի, Ղշլաղի, Նորագուղի և առանձնապես Ղուլալի գյուղերի աշխատավորներից կազմված զինված պարտիզանական ջոկատները, որոնք հակառակորդին հարվածում էին թիկունքից։[2]

Փետրվարյան ավանտյուրայի օրերին Ղարաքիլիսայում պարտիական կավկոմի նախաձեռնությամբ երկաթուղային բանվորներից կազմակերպվում է մեկ ջոկատ, որը անմիջապես մեկնում է Նոր-Բայազետի ռազմաճակատը։ Մարտի 15-ի Ն. Բայազետի փողոցային մարտերում այս ջոկատը ևս հերոսաբար պայքարում է թշնամու գերազանց ուժերի դեմ, ցույց տալով կարգապահության և նվիրվածության օրինակներ։[3]

Ինչպես տեսանք, Սովետական Հայաստանի Ռևկոմը և պետական մի շարք հիմնարկներ, Երևանի անկումից հետո կարմիր զորամասերի հետ գտնվում էին Ղամարլու—Վեդի հատվածում, որը կտրված էր Հայաստանի սովետական մյուս շրջաններից և գտնվում էր հակառակորդի օղակման ու ինտենսիվ հարձակումների պայմաններում։ Երկար ժամանակ կտրված էր ամեն տեսակի կապը այդտեղ գտնվող կարմիր զորամասերի և Ղարաքիլիսա—Դիլիջան—Ելենովկա ուղղություններով գործող 11-րդ բանակի զորամասերի միջև։

Հայաստանի հյուսիսային գավառներում սովետական աշխատանքները գլխավորելու և կոնտրռևոլուցիայի դեմ պայքարը կազմակերպելու համար 1921 թվի փետրվարի 27-ին Դիլիջանում կազմակերպվում է Դիլիջան—Ղարաքիլիսա գավառների Ռազմա-Ռևոլուցիոն կոմիտե, որի գլուխ, որպես նախագահ, կանգնում է Համառուսական Արտակարգ Հանձնաժողովի կովկասյան ռազմաճակատի լիազոր Դ. Աթարբեկյանը։ Նույն օրը Ռևկոմը Դ. Աթարբեկյանի ստորագրությամբ, հրատարակում է իր առաջին հրամանը, որտեղ ասված է.

«Ռ. Հ. Կոմիտեի իրավասության սահմանները տարածվում են Դիլի-

---

1 Տես «Ղամարլուից Զանգեզուր» հիշողությունների ժողովածու, Պետհրատ, Երևան, 1931 թ., էջ 140—143։

2 Տես նույն տեղը, էջ 143—146։

3 Տես «Սովետական Հայաստան» 16 մարտի 1926 թ., Լ. Հովհաննիսյանի հիշողությունները 1921 թ. քաղաքացիական կռիվների մասին։

ջանի և Ղարաքիլիսայի գավառների, մենշևիկյան բունապետ դահիճներից ազատագրված Լոռվա շրջանի և Նոր-Բայազետի Ելենովկա գավառամասի վրա։ Ռ. Հ. Կոմիտեի այդեցությունը տարածվում է նաև այն շրջանների և գավառների վրա, որոնք ազատագրվում են Կարմիր Բանակի մասերի կողմից Ելենովկայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ։

Վերոհիշյալ գավառների, գավառակների և շրջանների իշխանության ներկայացուցիչներին հրամայվում է խիստ կերպով ղեկավարվել Ռ. Հ. Կ. կարգադրություններով ու հրամաններով։

Այն բոլոր կարգադրությունները և հրամանները, որոնք չեն բխում Ռ. Հ. Կ. կողմից, կատարման չեն ենթարկվում։

Տեղական իշխանությունները պետք է հիշեն, որ ներկա ստեղծված կացությունը շատ լուրջ է և պահանջում է լուրջ հեղափոխական ենթարկում (դիսցիպլինա) և բոլոր կոմունիստական ուժերի լարումը՝ շուտափույթ կերպով վերջ տալու հակահեղափոխությանը և վերականգնելու Հայաստանում բանվորա-գյուղացիական Խորհրդային իշխանությունը»։[1]

Դաշնակների կոնտրռևոլուցիոն խռովությունը արագ կերպով լիկվիդացնելու համար, ինչպես Ղամարլու—Վեղիի կողմից, նույնպես Ելենովկա—Նոր-Բայազետ, Ելենովկա—Ախտա—Երևան և Ղարաքիլիսա—Համամլու—Ապարան—Աշտարակ Երևան ուղղություններով սկսվում են Կարմիր Բանակի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների պարտիզանական ջոկատների հարձակողական հերոսական գործողությունները։

Ղամարլու—Վեղիում ամրացած կարմիր զորամասերը երեք-չորս օրում կատարում են բոլոր ուժերի հաշվառում և վերադասավորում։ Ամրացվում է կոմունիստական ջոկատը, ուր կենտրոնացվում են Կոմպարտիայի և Կոմերիտմիության բոլոր անդամ-թեկնածուները։ Կարմիր Բանակի շարքերը լրացվում են Ղամարլուի և Վեղիի աշխատավոր գյուղացիներով։ Այդ ժամանակ Ղամարլուի ֆրոնտի կարմիր զորամասերի ամբողջ ուժերն էին՝ հետևակ 1664 հոգի, հեծյալ՝ 70 հոգի, 2 զրահագնացք—«Մուսայելյան» և «Ազատամարտ», 11 հրանոթ, 64 գնդացիր։[2]

Խնդիր ունենալով ազատագրել Երևանը, կարմիր զորամասերը փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերն անցնում են հարձակման։ Մինչև փետրվարի 28-ը Վ. Ազրաշ—Ուլուխանլու հատվածում Երևանի համար տեղի են ունենում համառ մարտեր։ Առաջ շարժվելով, Կարմիր Բանակը հասնում է մինչև Վ. Շենգավիթ, Ադյաղչլաղ և Զարրախ գյուղերը (որոնք Երևանից հեռու են 6—8 կիլոմետր)։ Ուճապահար նահանջելով, դաշնակները թողնում են մեծ թվով սպանվածներ, վիրավորներ, գերիներ և մեծ քանակությամբ ռազմամթերք ու պարեն։ Կարմիրների հարվածն այնքան ուժգին է լինում, որ փետրվարի 26-ին «Հայրենիքի Փրկության Կոմիտեն» իր նիստում քննության է առնում Երևանից փախչելու հնարավոր ուղիների հարցը։

«Այդ երեկոյան,—գրում է Կ. Սասունին,—Փրկության Կոմիտեի նիստում խոսք բացվեց... թե՝ եթե պարագաները մեզ ստիպեն թողնել

[1] Հ Կ (բ) Պ Կենտկոմին կից Պարտ. Արխիվ, պատմական մաս, նյութեր 11-րդ Բանակի վերաբերյալ, կապոկ № 4, գործ № 1, թերթ 87։

[2] Տես «Խորհրդային Հայաստան» № 2008, 1928 թ. փետրվարի 26։

քաղաքը, այն ժամանակ ձր ուղղությունը պետք է բռնել»[1]։ Սակայն, օգտվելով այն հանգամանքից, որ Ելենովկայի և Ապարանի ուղղությամբ կարմիրները դեռ չէին սկսել ուժեղ հարձակումը, դաշնակները Ղամարլուի ճակատում կարմիրների թևերում կենտրոնացնում են նոր և մեծ ուժեր սպառնալով նրանց թիկունքին։

Կարմիր Բանակը թիկունքն ապահովելու նպատակով ետ է քաշվում իր գրաված դիրքերից (փետրվարի 28-ի գիշերը)։ Այդ կռիվների ընթացքում, փետրվարի 26-ին Վ. Աղբաշում հերոսաբար սպանվում է 2-րդ հրետ. գնդի հրամանատար Աիշելևիչը։

Նահանջելով, մարտի 2-ին կարմիրները նորից ամրանում են Կաբաբաղլար—Բեյուկ-Վեդի—Ենգիջա—Խոր-Վիրապ—Թայթան գծում։ Նույն օրը հրապարակվում է Կարմիր Բանակի Հայկական զորամասերի հրամանատարի հրամանը, որտեղ գնահատելով փետրվարի 24—28-ի հերոսական մարտերը, ասվում է.

«Հնգօրյա հաստ մարտերի ընթացքում ՀՍԽՀ տերիտորիայում գործող, իմ խնամքին հանձնված զորամասերը, հաղթահարելով արհեստական և բնական խոչընդոտները, կրելով մեծ կորուստներ, մի շարք հաղթանակներ են ձեռք բերել հակառակորդի նկատմամբ, հակառակորդ, որը գերազանցում էր քանակով։

Առանձին ընկերների հերոսությունը, նրանց ձգտումը դեպի առաջ, դեպի հաղթանակ, և իմ խնամքին հանձնված զորամասերի հավատը մոտ ապագայում վերջնական հաղթանակ ձեռք բերելու համար, զորամասերին մղում էր մի հաղթանակից դեպի մյուսը և միայն երկու կողմից կատարված խորը շրջանցումը ստիպեց մեզ ետ քաշվել և նորից տակտիկական տեսակետից ավելի ձեռնտու դիրքեր գրավել...»։

Դարալագյազում կենտրոնացած խմբապետ Ցապոնի բանդաները, խնդիր ունենալով հարվածել Ղամարլու—Վեդիում գտնվող կարմիր զորքերի թիկունքին և միանալ Երևանում գտնվող կոնտրռևոլուցիոն ուժերին, մարտի 1-ին ուժեղ հարձակում են սկսում դեպի Վեդի՝ Զանախչի—Ջինջրլու ուղղությամբ։ Սակայն առաջին իսկ հարձակման ժամանակ նրանք ետ են շպրտվում Սովետական Նախիջևանի բանվորներից ու գյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատի՝ Կարմիր Տաբորի ջախջախիչ հարվածներից։ Կարմիր Տաբորը, որը բաղկացած էր 400 պարտիզան մարտիկներից, ետ շպրտելով Ցապոնի բանդաներին և գրավելով կարևոր ստրատեգիական վայրերը, մինչև վերջ հերոսաբար պաշտպանեց Ղամարլու—Վեդիի շրջանում ամրացած սովետական զորամասերի թիկունքը։ Դրանով նա դաշնակների Դարալագյազի բանդաներին զրկեց Երևանի՝ «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» ուժերին միանալու հնարավորությունից։

Մարտի 8-ին թշնամին Երևանի կողմից սեղմելով կարմիրների ձախ թևը, հանկարծակի ուժեղ հարձակում է սկսում Քիչիկ-Վեդի գյուղի և Խոր-Վիրապի վրա։ Սակայն ենթարկվելով մարտական կոմիսար Լիպարիտ Մխչյանի ղեկավարած Հայկական առաջին բրիգադի խիզախ հակագրոհներին, նա մեծ կորուստներ կրելով, խուճապահար նահանջում է։ Այդ մարտում ծանր կորուստներ են ունենում նաև կարմիրները։ Սպանվում է հրե-

[1] «Հայրենիք», 1923 թ. № 2(38), էջ 111։

տանու քաջարի պետ Սիմյոնովը, մահացու վիրավորվում է բոլշևիկների պարտիայի հավատարիմ զավակ, Հայկական առաջին բրիգադի մարտական կոմիսար Լիպարիտ Մխչյանը։ Այդ ծանր վերքից նա մահանում է նույն թվի ապրիլի 16-ին։

Մարտի 9-ին Ղամարլուի կարմիր զորամասերը Թիֆլիսի և Բաքվի հետ վերականգնում են ռադիո-կապը, որը փետրվարյան ավանտյուրայի սկզբից ընդհատված էր։ Ռադիոն հաղորդում է, որ 11-րդ Բանակի ուժերը Ելենովկա—Աիտայի և Համամլու—Ապարանի ուղղություններով սկսել են առաջխաղացումը դեպի Երևան։ Այդ լուրը մեծ ոգևորություն է առաջացնում Ղամարլու—Վեդիի հատվածում գտնվող սովետական զորքերի և պարտիզանների մեջ։ Չնայած ռազմամթերքի, պարենի, հագուստեղենի, կոշկեղենի սուր պակասությանը, հոգնածությանը և ուժեղ սառնամանիքներին, նրանք նորից սկսում են եռանդուն նախապատրաստությունը Երևանի վրա գրոհելու համար։

Երևանում, Կոտայքում, Ապարանում, Աշտարակում և Էջմիածնում պատսպարված դաշնակ-ավանտյուրիստների գրությունն այդ ժամանակ կրիտիկական էր։ «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» օրերն արդեն հաշվված էին։ Ա. Օրջոնիկիձեն մարտի 9-ին Գրուզ-Կավրոստայի աշխատակցի հետ ունեցած զրույցում անդրադառնալով Հայաստանում տիրող դրությանը, ասել է.

«Դրությունը Հայաստանում ներկա մոմենտում այսպես է.

Երևանը շրջապատված է կարմիր զորքերի օղակով։ Զորքերի առաջին խումբը, որն իր տրամադրության տակ ունի 2 զրահաղնացք և բավական քանակությամբ գնդացիրներ,—գտնվում է Երևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղամարլուի շրջանում։ Երկրորդ խումբը գտնվում է Ելենովկա—Ներքին-Ախտա շրջաններում։ Երրորդ խումբը՝ Համամլու—Ղարաքիլիսա շրջանում։ Գնալով այդ օղակը սեղմվում է և առանց որևէ կասկածանքի, Վրացյանի երևանյան ավանտյուրան մոտ օրերս կլիկվիդացվի»։[1]

Ելենովկայում գտնվող կարմիր զորամասերը, Ղարաքիլիսայի, Բաքվի և Ելենովկայի շրջանի բանվորների ու գյուղացիների պարտիզանական ջոկատները, որոնց գլխավորում էր Գ. Աթաբեկյանը, մարտի 12-ին սկսում են հարձակումը Ալեքսանդրովկա—Նոր-Բայազետ ուղղությամբ։ Նրանց խնդիր էր տրված գրավել Նոր-Բայազետը և ետ շպրտել հակառակորդին, թույլ չտալով նրան միանալու Երևանում գտնվող բանդաների հետ և օգնելու նրանց։

Ճանապարհին մի քանի տեղ ուժեղ մարտի բռնվելով և թշնամու կատաղի դիմադրությունը հաղթահարելով, նույն օրը երեկոյան կարմիր զորամասերը մտնում են Նոր-Բայազետը։ Դաշնակները շպրտվում են դեպի Երանոս, որտեղ վերադասավորելով իրենց ուժերը, մարտի 15-ի լույս 16-ի գիշերը կրկին հարձակվում են Նոր-Բայազետի վրա։ Քաղաքի շրջակայքում և փողոցներում մի քանի ժամ անընդհատ տեղի են ունենում ուժեղ կռիվներ, որոնք սեղ-տեղ փոխվում են սվինամարտի։ Հակառակորդը մեծ կորուստներ կրելով, մարտի 16-ին դարձյալ դուրս է շպրտվում Նոր-Բայազետից և նահանջում դեպի Երանոս—Ղարանլուղ (այժմ Մարտունի)։

[1] Г. К. Орджоникидзе—Избранные статьи и речи, стр. 110, 1939 г.

Բայազետի համար մղվող պայքարում խոշոր դեր խաղացին նույն քաղաքի և շրջանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, որոնք դաշնակներին հարվածում էին Թիկունքից։ Նոր-Բայազետի հատվածում գտնվող դաշնակցական զորքերի հրամանատար Բեկ-Զուրաբովը «սպարապետ» Նժդեհին (որն այդ ժամանակ գտնվում էր Բայազետի հատվածում) այդ առթիվ գրում է. «Դավաճանություններ քաղաքացիների կողմից էր. որոնք մեզ զարկեցին Թիկունքից...»[1]։

Ղամարլուի, Համամլու—Ապարանի և Ելենովկա—Ն. Ախտայի կողմերից սկսելով հարձակումը, կարմիրների զորամասերը ձմեռային սառնամանիքի պայմաններում կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, առաջ են շարժվում դեպի Երևան։

Վեդի—Ղամարլուից համառորեն առաջ շարժվող Կարմիր Բանակի ուժերը մարտի 17-ին հասել և ամրացել էին Վ. Աղբաշ-Ուլուխանլու հատվածում։ Այդ օրը Ուլուխանլու կայարանի մոտ տեղի ունեցած մարտում հակառակորդի 4-րդ գնդի մի ամբողջ գումարտակ անցնում է Կարմիր Բանակի կողմը և զենքն ուղղում ժողովրդի թշնամի դաշնակների դեմ։

Ելենովկա—Ախտա գծում Կարմիրներն ուժեղ կռիվներից հետո մարտի 16-ին գրավում են Ռնդամալ, Քարվանսարա, Մաքրավանք, Աղփարա գյուղերը։ Համամլու—Ապարան ուղղությամբ նույնպես գրավվում են մի շարք գյուղեր։

Հակառակորդի շարքերում խուճապը և հուսալքությունը մեծ չափերի են հասնում։ Այդ հուսալքությունը և խուճապը նույնիսկ չի կարողանում թաքցնել ժողովրդի առաջ իրենց «անհաղթելության» մասին ճառեր ասող Ս. Վրացյանը։ Մարտ 18-ին Նժդեհին ուղղած նամակում,[2] նա հուսակտուր կրում է. «Ես արդեն գրել եմ քեզ մեր կացության մասին։ Մի ամիս է կռվում ենք։ Վերջին օրերը նկատվում է ժողովրդի մեջ թուլություն և մարտիկների մեջ խուճապային տրամադրության նշաններ։ Կանգնած ենք ծանր հնարավորությունների առաջ։ Դրությունը կարելի է փրկել միայն Բայազետից և Դարալագյազից գործող ուժերով։ ... Մաել ենք բանակցության մեջ օգնության մասին նաև տաճիկ հրամանատարության հետ»։

Ինչպես տեսանք վերևում, կարմիր զորքերի և պարտիզանների վճռական գործողությունների շնորհիվ հակառակորդը զրկված էր Նոր-Բայազետի վրայով Դարալագյազից և Զանգեզուրից օգնություն ստանալու հնարավորությունից։ Նրան մնում էր երկու ելք՝ կամ անձնատուր լինել առանց արյունհեղությունների, կամ շարունակել անհուսալի կռիվը։

Հաշվի առնելով, որ Երևանի վերագրավումն արդեն կանխորոշված է և նրա համար մղվելիք հետագա կռիվներում կարող է բազմաթիվ աշխատավորների անտեղի արյուն թափվել, Ս. Օրջոնիկիձեն դաշնակ ավանտյուրիստներին առաջարկում է անձնատուր լինել։ Մարտի 20-ին Երևան՝ «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանի անունով Ս. Օրջոնիկիձեն ուղարկում է հետևյալ հեռագիրը.

---

[1] «Հայրենիք» 1925 թ. № 9, էջ 83։

[2] Այդ նամակը Նժդեհին չի հասնում, որովհետև նամակատարները Ն. Բայազետում բռնվում են։

[3] «Կոմունիստ» մայիսի 13, 1921 թ., № 83, Երևան։

«Ինձ Ներկայացան մի խումբ հայ ընկերներ և առաջարկեցին իրենց նախաձեռնությամբ դիմել ձեզ և առաջարկել, որ վերջ տրվի անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանիչ պատերազմին։ Մենշևիկյան կառավարության և Խորհրդային իշխանության միջև կոիվը վերջացավ բանվորագյուղացիական իշխանության լրիվ հաղթանակով, ամբողջ Վրաստանում Խորհուրդների ճանաչումով...

... Ամենքի համար պարզ է, և ամենափոքր կասկածանքի անգամ ենթակա չի կարող լինել, որ հասել է բանվորագյուղացիական իշխանության տիրապետության ժամը ամբողջ Անդրկովկասում։ Ահա թե ինչու ես ընդունում եմ հայ ընկերների դիմումը և առաջարկում եմ ձեզ՝ անհապաղ դադարեցնել անհուսալի կոիվը՝ հիմք ընդունելով վերջնականապես զենքը վայր դնել...»[1]

Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Նույնպիսի առաջարկով այդ օրերին Թբիլիսիից Երևան է մեկնում հայ ժողովրդի մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը։ Սակայն Վրացյանի բանդան ոչինչ հաշվի առնել չի ուզում։ Ս. Օրջոնիկիձեի հեռագրին և Հ. Թումանյանի բանակցություններին դաշնակները պատասխանում են մարտահրավերով։

Դրանից հետո, մարտի 25-ից բոլոր կողմերից ծավալվում է կարմիր զորամասերի և պարտիզանական ջոկատների ուժեղ գրոհ դեպի Երևան։ Մարտի 26-ին Ելենովկա—Ախտա—Երևան ուղղությամբ կարմիր զորամասերը գրավում են Կարաջորան, Նուռնուս, Նովոնիկոլայեվկա և Թեղխարաբ գյուղերը։ Մարտի 28—30-ը առաջ շարժվելով, նրանք հասնում են Էյլար։ Էյլար—Արամուս—Դյամբեղ գծի վրա տեղի են ունենում ուժեղ կոիվներ, որոնց ընթացքում կոտրելով հակառակորդի դիմադրությունը, կարմիր զորամասերը շարունակում են առաջխաղացումը դեպի Երևան։ Համամլու—Ապարան—Աշտարակ—Երևան ուղղությամբ կարմիր զորամասերը մարտի 26-ին գրավում են Ղաչաղան, Վարթնավ և Զոթուր գյուղերը. 27-ին, ուժեղ մարտերից հետո, նրանք գրավում են Սպիտակի (Փամբակի) լեռնանցքը և շարունակում առաջխաղացումը։ Մարտի 29-ին գրավում են Ապարանը, ապրիլի 1-ին՝ Աշտարակը։

Հյուսիսից և հյուսիս-արևմուտքից կարմիր Բանակի այդպիսի ուժեղ գրոհը դաշնակներին հարկադրում է փախուստի ճանապարհ փնտրել։ Նրանք ցանկանում են ուղղություն վերցնել դեպի Դարալագյազ՝ Ղամարլու—Վեդիի վրայով։ Այդ նպատակով սկսում են կատաղի գրոհը Ղամարլու—Վեդիում գործող կարմիր զորամասերի վրա։ Միաժամանակ թիկունքից՝ Դարալագյազից կրկին ուժեղ հարձակումներ են սկսում խմբապետ Յապոնի ուժերը։ Բայց այս անգամ ևս նրանք դրական արդյունքների չեն հասնում։

Մարտի 3-րդ տասնօրյակում Վեդի—Ղամարլվում գտնվող կարմիր զորամասերի համար սկսվում են ամենածանր օրերը։ Իսպառ վերջացած էին ռազմամթերքի և պարենի պաշարները, իսկ գնումների համար այլևս փող չկար։ Մարտիկները մնացել էին առանց ուտելիքի, հիվանդները կերակրվում էին չոր մրգերով։ Այդ ծանր վիճակի մասին ռադիոն Արարատ կայարանից տալորդում էր Թիֆլիս՝ Ս. Օրջոնիկիձեին։ Ս. Օրջոնիկիձեն վճռական միջոցներ է ձեռք առնում Վեդի—Ղամարլու ջոկատին օգնելու համար։ Նրա ցու-

[1] «Կարմիր Աստղ» № 19, 1921 թ. մարտի 23, Թիֆլիս

ցուցումներով 1921 թվի մարտի 25-ին, ձմեռային դժվարին պայմաններում կատարվում է սովետական ինքնաթիռի հերոսական թռիչքը Թիֆլիսից դեպի Նախիջևան։ Հայաստանի լեռների ու կիրճերի վրայով մառախուղի միջից անցնելով 400 կիլոմետր տարածություն, ինքնաթիռը վայրէջք է կատարում Արարատյան դաշտում—Արաքսի ափին, փայլուն կերպով կատարելով իր մարտական առաջադրանքը։ Վեդի—Ղամարլվում մարտնչող կարմիր զորքերի համար նա հասցնում է 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի[1]։ Լենինի և Ստալինի ցուցումներով Ս. Օրջոնիկիձեի կողմից կազմակերպված այդպիսի օգնությունը էլ ավելի է բարձրացնում մարտիկների ու հրամանատարների ոգևորությունը։ Գործադրելով բոլոր միջոցները, մարտի 25-ից մինչև ապրիլի 2-ը անընդհատ տեղի ունեցած բոլոր մարտերում նրանք ետ են շպրտում հակառակորդի հարձակումները, ինչպես Երևանի, նույնպես Դարալագյազի կողմից և թույլ չեն տալիս, որ Երևանի ու Դարալագյազի դաշնակցական բանդաները միանան իրար։

Երևանի տակ համառ կռիվներ մղելուց հետո, քայքայելով հակառակորդի շարքերը և գլուխվին ջարդելով նրան, ապրիլի 2-ին հերոսական 11-րդ բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Բանաքեռի և Աշտարակի կողմից մտնում են Երևան։ Հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները դուրս են շպրտվում Սովետական Հայաստանի մայրաքաղաքից։ Կարմիր հեծելազորը ապրիլի 3-ին ազատագրում է Էջմիածինը։ Ապրիլի 4-ին Երևան են մտնում նաև Վեդի—Ղամարլվում գտնվող Հայկական կարմիր բանակի զորամասերը, որոնք շրջապատված լինելով թշնամուց, 45 օր անընդհատ ամենածանր պայմաններում հերոսաբար մարտնչեցին հանուն Սովետական իշխանության։

Ապրիլի 6-ին «Իզվեստիա» լրագրում տպագրվում է Գ. Աթաբեկյանի հեռագիրը, որտեղ ասված է.

«Երևան, 3 ապրիլի։ Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով Կարմիր բանակի զորամասերի օժանդակությամբ, լիկվիդացվեց դաշնակցություն պարտիայի Նոդկալի ավանտյուրան, պարտիա, որը հենվելով յուրքահպատակների ապաստակարգայնացած մասի, գաղթական կուլակների և մաուզերիստների վրա, իր մահվանից առաջ վերջին անգամ փորձ արեց լակեյական դեր խաղալ Անտանտի առաջ։ Հայ գյուղացիները և բանվորները, ջախջախելով ավանտյուրիստների բանդա-խմբակները՝ գրավեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը, վերջնականապես բարձրացնելով աշխատանքի կարմիր դրոշը։ Քաղաքի ամբողջ բնակչությունը հանդիսավոր կերպով դիմավորեց կարմիր ջոկատներին»։[2]

Երևանի և մյուս շրջանների աշխատավորությունն իր ազատարարին՝ հերոսական Կարմիր Բանակին դիմավորեց անհուն ցնծությամբ։ «Նույնիսկ այժմ, Վրացյանի պրովոկացիայից հետո,—ասում է ընկ. Ս. Օրջոնիկիձեն, չքավոր դասակարգը Երևանում աներևակայելի ուրախությամբ դիմավորեց Կարմիր զորքերին»։

Դաշնակները թողնելով Երևանը, Աշտարակը, Էջմիածինը և Կոտայքը, Խաչ-Գառնիի վրայով խուճապահար փախչում են դեպի Դարալագյազ։

[1] „Заря Востока", № 178, 1923 г. 4 августа.
[2] „ИЗВЕСТИЯ ВЦИК" № 74, 1921 г., 6 апреля.
[3] «Կարմիր Ասող» № 44. 1921 թ., ապրիլի 23, Թիֆլիս.

«Հայրենիքի Փրկության Կոմիտեն» հափշտակում և իր հետ փախցնում է հայ ժողովրդի հարստության մի մասը։ Միայն Երևանի պետական գանձարանից նրանք կողոպտում են ավելի քան մեկ փութ ոսկի, 750 միլիոն սովետական գրաժանիշ և այլն։[1]

Դաշնակցական հրոսակախմբերը փախուստի ժամանակ թալանում և ավերում են ճանապարհին հանդիպած բոլոր գյուղերը։

Հետապնդելով ջախջախված հակառակորդին, Կարմիր Բանակի զորամասերը ապրիլի 7-ին ազատագրում են Բաշ-Գառնին։ Ապրիլի 9-ից մինչև 15-ը հակառևոլուցիոն բանդաներից մաքրում են նաև Ղարանլուղի, Բասարգեչարի և Դարալագյազի շրջանները։

[1] Տես ՀՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, Ֆ. № 6/114, գ. № 128, թերթ 3.